

26.076

ՊԱՐՈՒՅՐ ՍՏԱՄԲՈԼՑԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՍՊԱՌ-ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ
Յ Ե Վ
ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОЙ СЛОВА
Академия Наук
СССР

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԿՈՈՊԵՐԱՐԶՐԴԻ

334.5

Ա-85

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախարան	Յերես
I Սպառողական կոոպերացիայի զարգացման եռագրերը	5
II Սպառողական կոոպերացիայի կազմակերպչական կառուցվածքը	9
1. Նախնական ցանցի կառուցվածքը.	9
2. «Վալրենի» կոոպերատիվները.	13
3. Միութենական շինարարությունը.	14
III Անգամների աճումը յեվ ազգայնակուրյան կոոպերացումը	16
1. Անդամների աճումը և կոոպերացումը	16
2. Չքավորների կոոպերացումը	17
3. Կանանց » »	19
IV Կոոպերացիայի ժխնանքները	20
1. Փայտաշրջանակները և նրան աճումը.	20
2. Հիմնական դրամագլուխը և նրա աճումը.	22
3. Սեփական և ոտար միջոցների փոխհարաբերությունը.	24
V Սպառողական կոոպերացիայի առեկտրական գործունեությունը	27
1. Շրջանառությունը.	27
2. Ապրանքային կալոցությունը (նազերուզկան).	
3. Կոոպերացիայի գերը յերկրի ապրանքային շրջանառության մեջ.	29
4. Կոոպերացիայի և մասնավոր շուկայի գները.	31
5. Սպառողական կոոպերացիան և պետական մանրածախ առևտուրը.	33
6. Ցանցի ապրանքների գնման աղբյուրները.	35
7. Կոոպերացիայի հավելումները և առևտրական ծախսերը.	36
VI Գների իջեցման բաղադրականությունը յեվ կոոպերացիան	39
VII Սպառողական կոոպերացիայի վարչական մարմինները մասին	46
VIII Զարգացումը կոոպերացիայում	52
IX Կոոպերացիայի կուլտուրական աշխատանքները	54
X Հայկոոպի կազմակերպչական բաժնի աշխատանքների մեթոդները	60
Հավելվածներ	

1877

334.5
4-8.5

ՊԱՐՈՒՅՐ ՍՏԱՄԲՈԼՑԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊԱՌ-ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ДОСТОУПОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР


ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿՈՈՊԵՐԱՏՐԻ
ՅԵՐԵՎԱՆ 1927

06 AUG 2013

0105 MAR 20

26.076

1928 51150



56796-66

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մինչեւ որս Հայաստանի Սպառողական կոոպերացիայի մասին չկա մի այնպիսի աշխատություն, վորով մեր լայն ընթերցող հասարակությունը, մանավանդ մեր մատաղ սերունդը՝ ուսանողությունը, կոմյերիտականները յեւ այլն, հնարավորություն ունենային ծանոթանալու նրա կատարած նվաճումների յեւ առաջադրած խնդիրների հետ: Սույն աշխատությունը նպատակե ունեցել լրացնելու այդ բացը: Սակայն այդ բոլորն իրագործվում ե կիսով չափ միայն: Այստեղ հնարավոր ե յեղել կանգ առնել առայժմ սպառողական կոոպերացիայի սկզբնական ցանցի գործունեության վրա: Կոոպերատիվների միություն «Հայկոոպ»-ի գործունեությունը, վոր Հայաստանի սպառկոոպերացիայի վողջ սիստեմի գործունեության խոշորագույն մասն ե կազմում, այս աշխատանքի մեջ բնավ չի շոշափված: Անտարակույս անհրաժեշտ ե, վոր այդ աշխատանքն ել կատարվի միտիկ ապագայում: Այդ աշխատանքը կատարելու դեպքում մոռյն հնարավոր կլինի մեր սպառողական կոոպերացիայի կատարած նվաճումների յեւ նրա խնդիրների ամբողջական պատկերն ունենալ:

1. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՅԻՆԱՅԻ ՋԱՐԳԱՅՄԱՆ ԵՏԱՊՆԵՐԸ

Խորհրդային միության մեջ սպառողական կոոպերացիայի—
—վորպես ինքնագործ մասսաների վրա հենվող տնտեսական
կազմակերպության—նորմալ զարգացումը սկիզբ է առել 1925
թվականից: Մինչ այդ վողջ կոոպերացիան՝ ամբողջ միության
մեջ, ռազմական կոմունիզմի շրջանում՝ հանդիսացել է սոսկ տեխ-
նիկական—բաշխման ապարատ՝ խորհրդային իշխանության
ձեռքին և դա, ի հարկե, յեղել է տվյալ ժամանակաշրջանի ո-
րոշակաբար պայմանների թելադրանք:

Կոմկուսակցության տնտեսական նոր քաղաքականության
կիրառման հետևանքով հիմնավորապես փոխվում են նաև կոո-
պերացիայի դերը և նշանակությունը: Տնտեսական նոր քաղա-
քականության առաջին շրջանում, պետք է ասել, կոոպերացի-
այի նշանակությունը մեր սոցիալիստական տնտեսության շի-
նարարության մեջ **թերագնահատվել է:**

Ընկ. Լենինը «Կոոպերացիայի մասին» հոդվածում իր հող-
վածն սկսում է հենց այդ թերադնահատության փաստն ար-
ձանագրելով: Նա ասում է. «Ինչ թվում է, վոր մեղանում բա-
վարար չափով ուշադրություն չեն դարձնում կոոպերացիայի
վրա: Հազիվ թե բոլորն էլ հասկանան, վոր այժմ, սկսած հոկ-
տեմբերյան հեղափոխությունից և անկախ տնտեսական նոր քա-
ղաքականությունից (ընդհանրապես, այս պետք է սենք հենց
շնորհիվ տնտեսական նոր քաղաքականության), կոոպերացիան
մեղանում բոլորովին բացառիկ նշանակություն է ստանում»:

Ընկ. Լենինի հանճարեղ նախատեսությունները ոժտված այս
հողվածը հսկայական նշանակություն ունեցավ մեր նոր տնտե-
սական քաղաքականության և, մասնավորապես, կոոպերացիայի
հետագա ճիշտ զարգացման համար: Ավելին կարելի է ասել.
ընկ. Լենինի յեղևթը կոոպերացիայի զարգացման հա-
մար բացեց մի նոր դարաշրջան:

Սպառնալիցաների 1923—24 թվականների զարգացման բնորոշ կողմը հանդիսանում է կամավոր ահաբեկչության սկզբունքի կիրառումը: 1923 թ. դեկտեմբերի 28-ին Սորհրդային միության Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական կողմից հրատարակվում է հետևյալ դեկրետը.

«Նպատակ ունենալով նոր տնտեսական քաղաքականություն պայմաններում սպառնալիցաների կոոպերացիայի հետագա զարգացումը, խՍՀՄ կենտգործկոմը և Ժողովրդական վորոշում են՝

1) Փոխել ազգայնականության պարտավորեցուցիչ կցումը միասնական սպառնալիցաներին: Սպառնալիցաների կոոպերացիայի անդամագրվելը, ինչպես և նրանից դուրս գալն այսուհետև դառնում է կամավոր:

2) Առաջարկել Սորհրդային հանրապետությունների սպառնալիցաների կենտրոնական մարմիններին ձևապես առնել անհրաժեշտ նախապատրաստական միջոցներ, սպառնալիցաների վերականգնելու նոր կամավոր անդամագրության սկզբունքներին հիման վրա»:

Այնուհետև, ի զարգացումն այս դեկրետի, կառավարությունը 1924 թ. մայիսի 20-ին ընդունում է ավելի մանրամասն դեկրետ, վորով և սպառնալիցաների դեկլարավում է մինչև որս: Կամավոր անդամագրության սկզբունքն իսկապես հիմք դրեց կոոպերատիվ իսկական շինարարության: Սպառնալիցաների զրանից հետո բավական յերկար ժամանակ ապրում է վերականգնության և ձևակերպման հսկայական շրջան: Սպառնալիցաների իր զարգացման այդ շրջանում դառնում է իր ճիշտ ուղին և վերջնականապես ձևակերպվում, վորպես իր անդամների վրա հենվող հասարակական կազմակերպություն:

Սպառնալիցաների զարգացման յերկրորդ կարևոր ետապը զուգադրվում է մեր յերկրի տնտեսական ընդհանուր վերելքին և արտադրական ուժերի աննախնթաց աճմանը: Մեր տնտեսությունը սոցիալիստական սեկտորի զարգացման հետ միասին զարգանում է նաև մասնավոր կապիտալը և դժվարացնում ու բարդացնում պայքարն այդ յերկու տնտեսական սխաեմների միջև:

Կոմկուսակցության XIV.-րդ կոնֆերանսն այդ շրջանը հետևյալ ձևով է բնորոշում *) «...արտադրական ուժերի աճումը,

*) «Ռ. Կ. Կ. (Բ) 14-րդ կոնֆերանսի բանաձևերը. «Կոմունիստ» ամսագրի № 1-ի հավելվածից:

ապրանքադրամային հարաբերությունների հետագա զարգացման պայմաններում՝ նոր դժվարություններ ել է ծնեցնում: ՍՍՀՄ-ի տնտեսության սոցիալիստական տարրերի սմրացմանը զուգնթաց և միևնույն ժամանակ տեղի ունի, տեղի յն ունենալու մասնավոր կապիտալի զարգացումը և դրա հետ կապված՝ մրցման մասնակի սրումը, տնտեսության սոցիալիստական ու կապիտալիստական տարրերի միջև թե քաղաքում և թե մասնավանդ գյուղում»:

Այդ է պատճառը, վոր կոոպերացիայի աշխատանքների ուժեղացման ու խորացման հարցը կենսական խնդիր է դառնում մեր տնտեսական քաղաքականության համար: Կոնֆերանսի բանաձևը շարունակում է. «առևտրի ասպարեղում մասնավոր կապիտալին բաժին մնացած այդ դերը վոչ թե փոքրացնում, այլ մի քանի անգամով մեծացնում է կոոպերացիայի, և մասնավորապես սպառնալիցաների կոոպերացիայի առաջ դրված խնդիրներն ու, բնականաբար, թելադրում է կուսակցությանն ու պետությունը, կոոպերացիայի կաբիքներին ավելի ուշադիր վերաբերվելու և ավելի վճռական կերպով նրան ոժանդակելու անհրաժեշտությունը»:

Սպառնալիցաների զարգացման յերկրորդ շրջանում նրա հետագա քաղաքականությունը ընդգծել է շատ մանրամասն ու բազմակողմանի կերպով XIV.-րդ կոնֆերանսը. այդ քաղաքականության հիմնական մոմենտները կայանում են հետևյալում:

1) Մասնավոր շուկայի դեմ հաջող պայքարելու. համար, ուժեղացնել սպառնալիցաների ֆինանսները՝ պետական բյուտջեյի հատկացումների կարգով:

2) Սպառնալիցաների ֆինանսական խախուտ դրությունը կարգավարելու համար, անհրաժեշտ է, վոր կոոպերացիայի գործառնությունները լինեն անդեֆիցիտ և ունենան վորոշ կուտակում:

3) Սպառնալիցաների իր զարգացման առաջին շրջանում՝ ծավալվեց քանակապես, այժմ անհրաժեշտություն է ներկայանում, վորնա խորացնի և վորակապես բարձրացնի իր աշխատանքները, պայքարելով բոլոր այն հիվանդոտ կողմերի դեմ, վորոնցով կոոպերացիան աչքի յեր ընկնում իր գործունեության բոլոր բնագավառներում: «Կոոպերացիայի աշխատանքների վորակը ներկա մոմենտում վճռողական նշանակություն ունի: Այս խընդրի լուծումից է կախված կոոպերացիայի ներկա աճումը»:

4) Տարբեր կոոպերատիվ կազմակերպությունների ֆունկցիաների շփոթումը մեծ չափով խանգարում էր կոոպերատիվ կազ-

մակերազմությունների նորմալ գործունեությունը: Կենսական անհրաժեշտություններ, մանավանդ, սպառողական և գյուղատնտեսական կոոպերատիվների պարտականությունների խիստ սահմանափակումը:

Այդ շրջանում սպառողական կոոպերացիան իրապես ֆինանսներով ուժեղացավ, նրա առևտրական շրջանառությունը մեծ չափով աճեց և նախկինի համեմատությամբ նա վորակապես լավացավ, դարձավ մեր սոցիալիստական շինարարության խոշորագույն կազմակերպություններից մեկը:

Սպառողական կոոպերացիայի զարգացման յերրորդ ետապը մենք այժմ ենք ապրում: Այժմյան մոմենտի ամենաբնորոշ կողմերն են՝ խորհրդային միություն ինդուստրիալիզացիայի, վոլջ տնտեսության բեկոնստրուկցիայի խնդիրները և գների իջեցման քաղաքականությունը: Այս հիմնական խնդիրները մեր տնտեսական քաղաքականության առանցքն են կազմում. նրանց ճիշտ և դրական լուծմամբ առավելագույն չափով ապահովված կլինի մեր կուսակցության XV-րդ կոնֆերանսի կողմից առաջադրված թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական բոլոր խնդիրների իրական լուծումը:

Այդ կարևոր խնդրի լուծումը յիլակետ ունենալով, այսօր սուր կերպով դրված է խորհրդային վոլջ ապարատի, մասնավորապես պետառևտրի և կոոպերացիայի բացիոնալիզացիայի հարցը: Սպառողական կոոպերացիան այդ ուղղությամբ հսկայական անելիքներ ունի. նա դեռ իր ապարատի բացիոնալիզացիայի պատասխանատու և դժվարին խնդրին նոր-նոր և անցել:

Կոոպերատիվ կազմակերպությունները վաղուց սկսել են գների իջեցման գործը և առաջիկայում ևս պետք է այն շարունակեն ամենայն վճռականությամբ:

Սպառողական կոոպերացիայի աշխատանքների հիմնական մոմենտներից մեկն էլ նրա **պլանային** աշխատանքներն են: Մեր տնտեսությունն այժմ զարգացման այնպիսի ֆազ է ապրում, յերբ առանց նախամտածված պլանային աշխատանքի մի քայլ անգամ առաջ գնալ չի կարելի:

Սպառողական կոոպերացիայի յերրորդ շրջանի գործունեության բնորոշ կողմերի մասին այստեղ հարկ չկա մանրամասնորեն կանգնելու, քանի վոր սույն աշխատության մեջ շոշափած բոլոր խնդիրները վերլուծում և լուսաբանում ենք, հիմք ընդունելով մեր այժմյան տնտեսական քաղաքականությունը:

II. ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Նախնական ցանցի կառուցվածքը.— Կոոպերացիայի առողջ զարգացման տեսակետից չափազանց մեծ նշանակություն ունի նրա կազմակերպչական կառուցվածքը: Մանավանդ մեր խորհրդային տնտեսության պլանային շինարարության պայմաններում սպառողական կոոպերացիայի վոլջ սիստեմը վարից-վեր կառուցելու խնդիր մեզ համար կարևորագույն հարցերից մեկն է հանդիսացել: Այլապես՝ յեթե չլիներ նախամտածված և ծրագրային մոտեցում դեպի այդ կարևոր հարցը ու անձնատուր լինեինք տարերքին՝ այն ժամանակ մենք կունենայինք միանգամայն հակառակ պատկեր, քան ունենք այժմ: Իսկ ամեն մի գյուղում սեփական կոոպերատիվ ունենալու տարերային ձգտումը գոյություն ունեցել է. նույն բանը շարունակում է մնալ նաև այժմ: Հայկոպի կազմակերպչական բաժինը համառ հետևողականությամբ դիմադրել է, պայքարել է այդ յերևույթի դեմ և աշխատել է կոոպերատիվ շինարարությունը դնել խիստ ծրագրված հունի մեջ:

Ինչպես և յեղի սպառողական կոոպերացիայի կազմակերպչական գրությունը՝ մինչև խորհրդային Հայաստանի հաստատումը:

1917 թվից սկսած՝ համաշխարհային պատերազմի անմիջական ազդեցության տակ, սովի ու քաղցի պայմաններում, տարերային կերպով, Հայաստանի բոլոր մասերում, իրարից անկախ, սուսկի նման ստեղծվեցին զաճաճային միախառնութ կոոպերատիվներ: Մեկ տարի ու կեսվա ընթացքում նման կոոպերատիվների թիվը 300-ից անցավ: Միայն Յերևան քաղաքում, մինչև 1920 թվականը, կազմակերպված էին 25 ինքնուրույն կոոպերատիվներ, վորոնք կատարի մրցման մեջ էլին միմիանց հետ: Մեծ մասամբ այդ կոոպերատիվների ղեկավարությունն անցնում էր ճարպիկ և խորամանկ չարչիներին, կուլակների և տերտերների ձեռքը: Այնուհետև՝ մինչև 1920 թվականը, Հայաստանի բոլոր գավառներում, մինչև իսկ գավառակներում, կազմակերպվեցին շրջանային միություններ: Այդպիսի միություններ ստեղծվեցին Ալեքսանդրապոլում, Լոռում, Դիլիջանում, Նոր-Բա-

յաղետում, Եջմիածնում և Ղամարլուում: Դրանց գլխին եւ կանգնած եր հին Հայկոպը, վորի տնտեսական և կազմակերպչական ղեկավարութիւնը չափազանց թույլ եր արտահայտվում: Այդ շրջանային միութիւնները ներկայացնում եյին իրենցից մի մի անկախ իշխանութիւններ: Ահա վասիկ այն կազմակերպչական քառքը, վոր գոյութիւն ունեւ մինչև Խորհրդային Հայաստանի հաստատումը:

Խորհրդային Հայաստանում կոոպերատիվ լուրջ շինարարութիւնն սկսվել է 1923 թվի սկզբից: Մինչ այդ Խորհրդային իշխանութիւնը և համապատասխան կազմակերպութիւնները կլանված եյին յերկիրը ծայր աստիճանի քայքայված վիճակից փրկելու աշխատանքով:

Ի՞նչ ուղղութիւնը ե զարգացել մեր կոոպերատիվ շինարարութիւնը: Նա սկզբից և յետ ունեցել է կազմակերպչական յերկու ձևակերպութիւն: Միաժամանակ յերկու են թե միախառնութիւնը և բազմախառնութիւնը: Այդ շինարարութիւնն նպատակահարմարութիւնը հաստատել են Հայկոպի թե յերկրորդ (1924 թ.) և թե յերրորդ (1925 թ.) լիազորական ժողովները: Յերկրորդ լիազորական ժողովի վորոշումն ասում է. «Սկզբնական կոոպերատիվները լինելու յեն բազմախառնութիւն և միախառնութիւն: Տնտեսական խոշոր նշանակութիւն ունեցող շրջաններում, այլ և գաղառական ու գաղառակային կենտրոններում բազմախառնութիւն կոոպերատիվը լավագոյն հետևանքներ ե տալիս: Միաժամանակ՝ շնորհիվ գյուղացիական փոխօգնումների, կոմբինատների, կոմյերիտիւթյան, տեղերում յերևան բերած ինքնագործունեութիւն և գյուղական լայն մասսաների աստիճանական մտավոր կոոպերացման՝ միախառնութիւն կոոպերատիվներն առանձին շրջաններում ցույց են տալիս վոչ պակաս կենսունակութիւն: Խանգարել այդ ինքնագործունեութիւն ձևակերպումներին արհեստական խոչնդոտներով, նպատակահարմար չե և վոչ ել կոոպերացման շահերի տեսակետից ոգտակար, ուստի թե բազմախառնութիւն և թե միախառնութիւն կոոպերատիվների ազատ զարգացման համար պիտի ստեղծվեն համապարաչափ նորմալ պայմաններ»:

1923-24 թվերին և մասամբ 1925 թվին մեր կոոպերատիվ շինարարութիւնն ունեցել է բազմախառնութիւն քեֆում: Այդ թեքումին հիմք են ծառայել, ի հարկե, տվյալ ժամանակաշրջանի տնտեսական-ֆինանսական կոնյուկտուրան, կոոպերացված մասսաների ակտիվութիւնն աստիճանը և գոյութիւն ունեցող

կոոպերատոր ուժերի քանակն ու վորակը: Ահա վասիկ մեր ցանցի զարգացման պատկերը:

Սպառողական կոոպերացիայի ցանցը

Տախտակ № 1*)

	1924 թ. հունվարի 1-ին	0/0	1925 թ. հոկտեմ. 1-ին	0/0	1926 թ. հոկտեմ. 1-ին	0/0
Կոոպերատիվներ	43	100	68	158%	81	188%
Խանութներ . . .	60	100	276	590%	309	615%

Այս թվերը պարզ ասում են, վոր մեզ մոտ բազմախառնութիւն սխառնվել զերակշռող տեղ ե բռնել և նա իր ծաղկման շրջանում միանգամայն արգարացրել է իր գոյութիւնը: Սակայն բազմախառնութիւն սխառնվել զարգացումը 1925-26 տնտ. տարվա վերջերին կանգ ե առնում: Նա իր զարգացման գաղաթնակետին ե հասնում ու տալիս ե վորոշ ձեղքվածներ, վորից հետո մեր կոոպերատիվ շինարարութիւնն մեջ սկսվում ե վերին աստիճանի առողջ յերևույթ: Մեծանում և ուժանում են մեր բազմախառնութիւն կոոպերատիվներն իրենց ֆինանսական ու կազմակերպչական հնարավորութիւնների սահմաններից դուրս, մյուս կողմից՝ այն ուժեղ գյուղերը, վորոնք ունեն բազմախառնութիւն բաժանմունք, ուժեղանում են տնտեսապես, ակտիվանում ե կոոպերացված մասսան, տեղական ակտիվից կոոպերացիայի համար ստեղծվում են աշխատող ուժեր:

Մի խոսքով, ԻճԳՆՈՒՐՈՒՆԿ կոոպերացիվ գառնալու համար ստեղծվում են բոլոր ահեռածես հախապայմանները: Հայկոպի կազմակերպչական բաժնի ուսումնասիրութիւններից հետո սկսվում ե բազմախառնութիւն կոոպերատիվների բաժանմունքների անջատման և նրանց ինքնուրույն կոոպերատիվների վերածման առողջ պրոցեսս:

1925-26 տնտեսական տարվա ընթացքում բաժանվել և ինքնուրույն կոոպերատիվներ են դարձել հետևյալ բազմախառնութիւնների բաժանմունքները. Եջմիածնի կոոպերատիվից բաժանվեցին Փարաքարը, Սամաղարը և Խաթունարիւր: Ղուրդու-

*) Ցանցին վերաբերող թվական տվյալները բերված են Հայկոպի ստատիստիկական յենթաբաժնից:

դուրու կոոպերատիվից՝ Շահրիարը, Մարգարան. հերթի յե դըր-ված Սարգարապատը: Դարաքիլիսայի կոոպերատիվից՝ Համգա-չիմանը, Շահալին և Մեծ-Պարնին: Ներքին-Ախտայից՝ Ռնդա-մալը: Այժմ հերթի յե դըրված Ստեփանավանի կոոպերատիվից Վարանցովկայի բաժանմունքն անջատելու խնդիրը և արդեն գործնական քայլեր են արվում այդ ուղղությամբ: Ինքնուրույն կոոպերատիվ դարձած բաժանմունքներն իրենց հետագա գործու-նեությունը յերևան հանեցին **անսպասելի կենսունակություն** յեվ առողջ գործունեություն: Դրանցից շատերը ավելի լավ աշ-խատանք սկսեցին տանել, քան իրենց մայր կոոպերատիվները: Դրանցից վոմանք ել այնքան առաջ գնացին, վոր իրենց հեր-թին դարձան առողջ բազմախանութ. կոոպերատիվ: Որինակ՝ Սամադարը:

Այս յերևույթն, ըստ ամենայնի, ապացույց է մեր յերկրի ընդհանուր վերելքի, նրա թե տնտեսական, թե կուլտուրական և թե կոոպերատիվ խորացած աշխատանքի:

Այժմ հարց է ծագում. ինչ ուղղությամբ և գնալու մեր կոոպերացիայի շինարարությունը. բազմախանութային, թե՞ միախանութային կոոպերատիվի ճանապարհով: Մինչև այժմ մեր ունեցած փորձն ասում է, վոր մեր պայմաններում յերկու ձևերն ել հավասար չափով կիրառելի չեն: Բազմախանութային շինա-րարության մասին այդ կարծիքը չի ունեցել **Центросоюз-ի** 1924 թ. 38-րդ համագումարը, վորն ընդունել եր վորոշում՝ հոգուտ միախանութ շինարարության: Սակայն այժմ **Центросоюз-ի** կազմ. բաժնի հրահանգը՝ № 71, փետրվարի 10-ին, 1927 թ., ասում է. «պետք է ընդունել, վոր **Центросоюз-ի** 38-րդ համա-գումարի գերեկտիվը՝ բռնել միախանութ շինարարության կուրս, վերանայման պահանջ է զգում, շնորհիվ գյուղական կոոպերատիվ ցանցի գոյություն տնտեսական և այլ պայմանների փոփոխու-թյան»: Այսպիսով՝ կոոպերատիվ շինարարության մասին ունեցած մեր տեսակետը կյանքն ամրողություն արդարացրեց: Մեր կոոպերատիվ շինարարությունն այսուհետև եւ շարունակ-վելու յե նույն ուղիներով, վորը ճիշտ կերպով ընդգծել են մեր նախորդ լիազորական ժողովները: Սակայն՝ մեր հետագա շինա-րարության մեջ այս կամ այն ճիշտ թեքումն ընդունելու հա-մար, անհրաժեշտ է լուրջ ուսումնասիրության յենթարկել բազ-մախանութի և միախանութի մինչև այժմ ունեցած մեր հարուստ

փորձը: Այդ աշխատանքը մեր այս տարվա պլանի մեջ նախա-տեսնված է և պետք է իրագործվի:

«**Վայրենի**» կոոպերատիվները: Մեր կոոպերատիվ շինարա-րությունն նորմալ զարգացման մեջ ձեռքոված է առաջ բերում, այսպես կոչված «վայրենի» կոոպերատիվների գոյությունը: «Վայրենի» կոոպերատիվներ կոչվում են նրանք, վորոնք չեն մտնում Հայկոոպի ցանցի մեջ, հաստատված չեն Հայկոոպի կող-մից ու շարունակում են գոյություն ունենալ առանց պաշտո-նական ձևակերպություն: «Վայրենի» կոոպերատիվներ բավական ունենք: Զանգեզուրում կան 7-ը, Լենինականի գավառում 5-ը, Լոռի-Փամբակում—10-ը:

Դրանց առաջ գալու գլխավոր պատճառներն են՝ գոյություն ունեցող ապրանքային սովը, կոոպերացիայի տնտեսապես ձե-ռընտու լինելու հանգամանքը, մասսաների ակտիվացումն ու կոո-պերատիվ գիտակցությունը, մասամբ ել՝ գյուղի կուլակ տարրե-րի շահագիտական ձգտումների գոյությունը, վորոնց ազդեցու-թյունը նկատելի կերպով ուժեղ է «վայրենի» կոոպերատիվների վարչական մարմինների մեջ: Իսկ ընդհանուր առմամբ «վայրե-նի» կոոպերատիվների գոյությունը հետևանք է՝ անպայման, գյուղական մասսաների **իճճագործունեություն**: «Վայրենի» կոո-պերատիվների գործունեության մեջ կարելի չե նշել ինքնագործ-նեություն և նախաձեռնության զարմանալի նմուշներ:

Լենինականի գավառի Դյուզքենդ գյուղի «Վայրենի» կոո-պերատիվը հասարակական միջոցներով ձեռնամուխ եր յեղել քարի մեծ շենքի կառուցման: Զանգեզուրի գավառում Ալի-Ղուլի շեն գյուղի «վայրենի» կոոպերատիվի անգամներն ամիսը 2—3 ան-գամ ընդհանուր ժողովներ են գումարում՝ ստուգելու իրենց կոոպերատիվի գործերն ու հաշիվները: Այնուհետև նրանք մեծ համառություն են յերևան հանում իրենց հաստատել տալու գործում, բազմաթիվ անգամներ կենտրոն ուղարկելով իրենց ներկայացուցիչներին:

Հայկոոպի վարչությունը «վայրենի» կոոպերատիվների ու-սումնասիրության և նրանց այս կամ այն ձևակերպությունը տալու հարցին լուրջ ուշադրություն է դարձրել: Նախ՝ բոլորն ու-սումնասիրված են: Դրանցից Լենինականի գավառի Դյուզքենդի, Քափանակի և Զրախլույի «վայրենի» կոոպերատիվները միաց-վեցին և կազմեցին մեկ կոոպերատիվ: Լոռի-Փամբակի գավառում հաստատվեց «Լոռուտ» «վայրենի» կոոպերատիվը: Մնացածները

աննշան մասը հավանորեն կհաստատվի, մի մասն ել կմիացվի այս կամ այն հարևան կոոպերատիվին իսկ յերրորդ մասը, վոր չունի, վոչ տնտեսական ե վոչ ել կազմակերպչական հեռանկար, կյենթարկվի լիկվիդացիայի:

Սպառողական կոոպերացիան մեր ժողովրդական տնտեսության մեջ այնքան մեծ կշիռ ե ստացել Եւ լայն մասսաների համար նրա տնտեսական շահավետությունն այնքան ակներե ե դարձել, վոր կոոպերատիվ չունեցող գյուղերի ազգաբնակչությունը սեփական կոոպերատիվ ունենալու մեծ ցանկություն ե յերևան հանում: Կամ թե՛ մեր կոոպերատիվների վարչությունները մասսաների ճնշման ազդեցության տակ՝ տրամադրություն են յերևան հանում նոր ու նոր բաժամունքներ բանալու, ընդարձակվելու: Այս հարցում Հայկոոպի վարչությունը շարունակում ե մնալ շատ զգուշ և պահպանողական: Նոր կոոպերատիվ կամ բաժամունքներ բանալու խնդիրը խիստ կերպով կենտրոնացված ե: Առանց լուրջ ուսումնասիրության, առանց տնտեսական-ֆինանսական ու կազմակերպչական նախապայմանների, չի կարող բացվել նոր կոոպերատիվ կամ բաժամունք: Այդ տեսակետից Հայկոոպի վարչության ընդունած 1926—27 տնտ. տարվա ստուգիչ թվերը ե պլանային յենթադրությունները թույլ են աալիս ցանցի լայնացում կատարել յեղած քանակի նկատմամբ 20⁰/₀-ի չափով, վորը կազմում ե 14 կոոպերատիվ միայն:

Ցանցի նորմալիզացիայի խնդիրը չափազանց կարևոր հարցերից մեկն ե և այն պետք ե Հայկոոպի կազմ-բաժնի կողմից յենթարկվի լուրջ ուսումնասիրության ու մեր յերկրի տնտեսական, աշխարհագրական պայմաններին համապատասխան լուծում ստանա:

Միութնուճական Եինաբաբութուն: Հայաստանի սպառողական կոոպերացիայի շինարարության մեջ, ստորին ցանցից հետո՝ յերկրորդ աստիճանը համահայաստանյան կոոպերատիվների միությունը—«Հայկոոպն» ե, վոր իր մեջ ե ընդգրկում մեր վողջ ցանցը ե ծառայում նրան թե կազմակերպչորեն և թե տնտեսապես: Նախախորհրդային կոոպերացիայի ժամանակ գոյություն ունեցող շրջանային միությունների—վորպես միջնորդ մարմինների—գոյությունը մեր կողմից մերժվում ե: Գալառական միությունների սիստեմը մեր յերկրում չունի վոչ մի տնտեսական

հեռանկար—նրա գոյությունը մեր ցանցի համար կլիներ մի ավելորդ բեռ և շատ քանզ կնստեր մեր կոոպերացված մասսաներին: Կենտրոնից հեռու գտնվող մի քանի գավառների կոոպերատիվներին եժան և նպատակահարմար կերպով ապրանք մատակարարելու համար Հայկոոպի կողմից կազմակերպվել են բազաներ—Լենինականում, Ղարաքիլիսայում և Քոլագերանում: Այդ բազաներն իրապես հանգիստում են եժան ապրանքամատակարարման կայաններ՝ մեր ցանցի համարյա 40—45⁰/₀-ի համար:

III. ԱՆԳԱՄՆԵՐԻ ԱՃՈՒՄԸ ՅԵՎ ԲՆԱԿԱԶՈՒԹՅԱՆ ԿՈՈՊԵՐԱՑՈՒՄԸ

Օճգամների աճումը ու կոոպերացումը.— Սպառողական կոոպերացիայի զարգացման և ուժեղացման կարևոր նշաններից մեկը համարվում է նրա անդամների թիվը և այդ թվի աճման աստիճանը: Պետք է ասած, վոր 1923 թվականից սկսած, կոոպերատիվի անդամների աճումը բավականին ուժեղ տեմպով է առաջ գնում: Սակայն, պետք է նկատել, վոր Հայաստանի բոլոր գավառներում անդամագրությունը և բնակչությունը կոոպերացումը համաչափ կերպով չի բնթանում: Այդ բացատրվում է զանազան գավառների տարբեր տնտեսական, աշխարհագրական և կուլտուրական պայմաններով:

Անդամների աճումը և ազգաբնակչության կոոպերացումը՝ ըստ գավառների, 1924 թվի հունվարի մեկից մինչև 1926 թ. հոկտեմբերի 1-ը հետևյալ պատկերն է ներկայացնում:

(Տես աղյուսակ № 2, 17-րդ յերեսում)

Խնչպես տեսնում ենք բերված թվերից, բավական մեծ նվաճումներ են արված, սակայն ազգաբնակչության տնտեսությունների կոոպերացումը դեռևս 37 տոկոսից չի անցնում: Աշխատանքի մեծ մասը դեռ մեր առաջն է և շատ բան ունենք անելու այդ ուղղությամբ: Կոոպերացման տեսակետից մեր ամենաթույլ գավառը Լենինականի գավառն է, վորը հասնում է 17,2%-ի. այնուհետև Նոր-Բայազեդի գավառն է՝ 21,3%-ի, ամենաուժեղ գավառը՝ ազգաբնակչության կոոպերացման տեսակետից՝ հանդիսանում է Դիլիջանի գավառը, վորը կազմում է 53,1%: Յերեվանի գավառը, ինչպես տեսնում ենք, Դիլիջանից բավականին հետ է մնում. նա՝ առանց Յերևան քաղաքի՝ կազմում է 45,0%: Ազգաբնակչության կոոպերացման բավական զգալի տոկոսային տարբերությունը բացատրվում է տվյալ գավառի տնտեսական, բնակ-

Օճգամների աճումը յեվ բնակչության կոոպերացումը

Տախտակ № 2

Գավառներ և քաղաքներ	Տնտեսությունների թիվը	1924 թ. հունվարի 1-ը		1925 թ. հոկտեմբերի 1-ը		1926 թ. հոկտեմբերի 1-ը	
		Անդամների թիվը	Ազգաբնակչության կոոպերացումը	Անդամների թիվը	Ազգաբնակչության կոոպերացումը	Անդամների թիվը	Ազգաբնակչության կոոպերացումը
Յերևան քաղաք	11,068	1,614	14,5%	6,852	61,9%	8,003	72,3
» Գավառ	26,288	807	3,0	7,629	29,0	11,823	45,0
Լենինական քաղաք	8,175	386	4,7	2,346	28,7	2,619	32,0
» Գավառ	26,468	353	1,3	3,346	12,5	4,548	17,2
Եջմիածնի գավառ	27,317	692	2,5	7,272	26,6	10,140	37,1
Լոռի-Փամբակ »	22,942	1,907	8,4	5,175	22,6	7,806	34,0
Դիլիջան »	14,425	685	4,7	4,772	33,1	7,662	53,1
Նոր-Բայազեդ »	18,684	422	2,3	1,867	10,0	3,981	21,3
Ջանգեզուր »	14,048	651	4,6	4,242	30,2	6,031	42,9
Դարալագյաղ »	6,383	311	4,9	1,858	29,1	2,366	37,1
Մեղրի »	1,853	320	17,2	576	31,1	771	41,6
Ընդամենը Հայաստ.	177,651	8,148	4,6	45,203	25,8	65,750	37,0

չությունը գնողական ունակության և կուլտուրական առանձնահատուկ պայմաններով: Այդ տվյալներից մենք պետք է հանենք համապատասխան յեղրակացություն և մեր աշխատանքներն ուժեղացնենք մեր թույլ կողմերը ամրացնելու ուղղությամբ:

Զբաղությունների կոոպերացումը.— Զբաղությունների շահերի պաշտպանությունը խնդիրը Կոմկուսակցության և Խորհրդային իշխանության համար յեղել է մտահոգության ամենաուրջ առարկաներից մեկը: Սպառողական կոոպերացիան ել իր հերթին, վորպես քաղաքական դիրեկտիվ, չբաղությունների կոոպերացման հարցում կատարել է վորոշ աշխատանք և ունեցել է համապատասխան հետևանքներ: Հայկոոպերացիայի քաղաքական բաժինը թի

96496-66



իր հրահանգիչների միջոցով, թե հաշվետու, վերընարական ու փա-
յավճարային կամպանյանների ժամանակ և թե մամուլի եջերում
աշխատել և չքավորների կոոպերացման անհրաժեշտություն
խնդիրը արծարծել լայն չափով և արագացնել նրա իրականա-
ցումը կյանքի մեջ: Չքավորների կոոպերացման հարցում մեր
81 կոոպերատիվներից տվյալներ ունենք միայն 50 կոոպերատի-
վից: 1924—25 և 1925—26 տնտեսական տարիների ոգուտներից
չքավորական ֆոնդին հատկացված է 10%—ը: Համարյա թե
բոլոր կոոպերատիվներն այդ հատկացումը կատարել են:

1925—26 տնտեսական տարում, 50 կոոպերատիվների տը-
վյալների համաձայն՝ չքավորական ֆոնդին հատկացվել է
8569 ու. փոկերից հատկացվել է նույն նպատակով 1812 ու.—ըն-
դամենը 10,381 ու.: Այդ գումարով կոոպերացման և յենթարկված
2616 չափով: 1926—27 տնտ. տարում դարձյալ 50 կոոպերա-
տիվների տվյալներով չքավորական ֆոնդին հատկացվում է
14,862 ու., իսկ փոկերից միայն 426 ու.—ընդամենը 15,288 ու.:
Այդ ֆոնդից մինչև այժմ կոոպերացման և յենթարկված
միայն 836 չքավոր. մնացած գումարը գեոևս չի ոգտագործված:

Մնացած՝ տեղեկություններ չներկայացնող 31 կոոպերա-
տիվները, յենթա ընդունենք, վոր նույն դրությունն են ներկա-
յացնում, ինչ ներկայացող կոոպերատիվների վիճակն է, և յենթա ամ-
բողջ գումարն ոգտագործվի, ապա կարելի չե վստահություն տալ,
վոր այս տարի չքավորների կոոպերացման թիվը կարելի չե հաս-
ցնել ընդհանուր առմամբ 10--11 հազարի: Մեր առաջիկա անելիքը
պետք է լինի, շատ կարճ ժամանակամիջոցում մնացած բոլոր գու-
մարները գործադրել այդ ուղղությամբ: Անհրաժեշտ է արձանա-
դրել, վոր տեղերում մեր շատ կոոպերատիվ վարչությունները չքա-
վորների կոոպերացման քաղաքական անհրաժեշտությունը և նրա
գործնական նշանակությունը՝ դյուրում վարած մեր քաղաքա-
կանության համար, չե՞ն քմբոցում և հաճախ հայտնաբերում են
հանցավոր վերաբերմունք գեպի այդքան կարևոր մի խնդիր:
Կան կոոպերատիվներ, վոր մի ամբողջ տարի չքավորական ֆոն-
դին հատկացված գումարը չեն ոգտագործել: Նման վերաբեր-
մունքն անհրաժեշտ է ամենայն վճռականությամբ վերացնել:
Փոկերի ոժանդակությունը, չքավորների կոոպերացման գործում՝
պետք է համարել շատ անբավարար: Անցյալ տարի նրանց
հատկացումները յեղել են միայն 1812 ու., իսկ այս տարի ոժան-
դակությունը արտայայտվում է ավելի աննշան գումարով. ընդա-

մենը՝ 426 ու.: Անշուշտ, յեղած ոժանդակությունը պետք է հա-
մարել միանգամայն անբավարար. անհրաժեշտ է փոկերի մաս-
նակցությունը չքավորների կոոպերացման գործում ավելի ու-
ժեղացնել:

Չքավորների ֆոնդերի գործադրության սկզբունքներն այս
տարի փոփոխված են: Նրանք չեն լինելու այլևս անվերադարձ,
վորպեսզի չստանան բարեգործական բնույթ: Հատկացված գու-
մարները չքավորների կողմից ժամանակին պետք է վերադարձ-
վեն, վորպեսզի նույն այդ գումարներով հնարավոր լինի նոր
ու նոր չքավորներ ներգրավել կոոպերացիայի շարքերը: Գումար-
ների վերադարձն, ի հարկի, անհկատելի կլինի չքավորների
համար. կտրվի շատ յերկտր ժամանակ, պրեմիաներից և դիվի-
դենդներից նրանք հատկացումներ կստանան:

Կանգնեց կոոպերացումը.—Այս ուղղությամբ վորոշ աշխա-
տանք կատարված է, սակայն անբավարար չափով: Մեր ունե-
ցած նախնական տվյալների համաձայն, կոոպերացման և յեն-
թարկված 2.865 կին, վորը կազմում է 6,6 տոկոս՝ բոլոր ան-
դամների նկատմամբ: Այս ուղղությամբ մեր աշխատանքները
պետք է ուժեղացնել:

Կոոպերացված մասսաների սոցիալական դրության ուսում-
նասիրության խնդիրը պետք է համարել հասունացած պահանջ:
Այդ աշխատանքը դժվար է և մեծ ժամանակ է պահանջում: Այս
տարվա մեր պլանային յենթադրությունների համաձայն պետք
է կատարենք 15 բնորոշ կոոպերատիվների անդամների սոցիա-
լական կազմի ուսումնասիրություն, վորը մեզ մոտավորապես
վորոշ պատկերացում կտա ամբողջ Հայաստանի մասին:

Առաջիկա տնտեսական տարվա ընթացքում, մեր ստուգիչ
թվերի համաձայն՝ նոր անդամների աճումը պետք է արտա-
հայտվի անցյալ տարվա նկատմամբ 28%—ով, վորը բացարձակ
թվերով կազմում է 16,000:

IV ԿՈՈՊԵՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

Փայադրամագլուխները յեվ նրանց աճումը.— Փայադրամագլուխը կազմում է սպառողական կոոպերացիայի սեփական միջոցների հիմնական աղբյուրը: Այդ տեսակետից, փայադրամագլխի դանձման և նրա ուժեղացման խնդիրը սպառողական կոոպերացիայի համար յեղել է, կա և մնալու է իրր ամենալուրջ մտահոգության առարկաներից մեկը: Տեսնենք ինչպիսի աճում է ունեցել փայադրամագլուխը 19⁴ թվից սկսած մինչև 1926 թ.:

(Տես աղյուսակ № 3, 21-րդ յերեսում).

Ինչպես տեսնում ենք, փայադրամագլուխը 27,728 ուրբլուց բարձրացել է, 31¹/₂ տարվա ընթացքում, մինչև 235,266 ուրբլու: Սակայն չնայած դրան, ամեն մի անդամի միջին փայավճարը հավասար է 3 ո. 58 կ. միայն: Կանոնադրությամբ ընդունված լրիվ 5 բուրլի փայավճարը գանձելու համար զեռես մնում է բավականին զգալի գումար՝ 1 ո. 48 կ.: Այս դրությունն, անշուշտ, անբավարար է. մենք պետք է աշխատենք կարճ միջոցում գանձել փայավճարի ամբողջ մնացորդը:

Մեր յերկրի ինդուստրիալիզացիայի պայմաններում, յերբ մեր պետության դրամական ազատ միջոցները գլխավորապես գործադրվում են այդ ուղղությամբ, յերբ պետական արդյունաբերությունն իր ապրանքային վարկավորման պայմանները՝ կոոպերացիայի նկատմամբ, քանի գնում վատթարացնում է, այսպիսի պայմաններում սպառողական կոոպերացիայի սեփական միջոցների ուժեղացման պրոբլեմը ամենակենտրոնական հարցերից մեկն է: Կոոպերացիայի սեփական միջոցները հետագայում ավելի մեծ չափերով ուժեղացնելու համար, միութենական ժողովուրդի կողմից ընդունվել է զեկրետ, վորով մինչև այժմ գոյություն ունեցող 5 ո. փայավճարի չափը բարձրացվում է գյուղական կոոպերատիվների համար 10 ո., իսկ բանավորական կոոպերատիվների համար 15 ո.:

Մեզ մոտ, 1926-27 տնտեսական տարվա առաջին կիսամյակում՝ հաշվետու վերնորական կամպանիայի ընթացքում, մեր ցանցի 35⁰/₀-ն իր փայավճարի չափը բարձրացրել է մինչև 10

Փայադրամագլխի յեվ միջին փայավճարի աճումը

Տախտ. № 3

Կոոպերատիվ- ներ	1924 թ. հունվարի 1-ը			1925 թ. հոկտեմբ. 1-ը			1926 թ. հոկտեմբ. 1-ը		
	Փայա- դրամա- գլուխ.	Անդամ- ների թիվը	Միջին փայավ.	Փայա- դրամա- գլուխ.	Անդամ- ների թիվը	Միջին փ.	Փայա- դրամա- գլուխ.	Անդամ- ների թիվը	Միջին փ.
Գյուղական	15,977	4,364	3 ո. 66 կ.	77,760	27,157	2 ո. 86	141,188	42,149	3 ո. 35
Գործադրական	4,255	1,784	2 ո. 38 »	9,351	2,483	3 ո. 89	16,551	3,852	4 ո. 30
Գավառակիկներ.	7,496	2,000	3 ո. 75 »	25,735	7,065	3 ո. 64	34,397	9,128	3 ո. 77
Բանկոպներ				23,708	9,198	2 ո. 58	43,130	10,622	4 ո. 06
	27,728	8148		136,854	45,903	2 ո. 89	235,266	65,750	3 ո. 58

ռուբլու: Այս ուղղութիւնով մեր աշխատանքները պետք է շարունակվեն ամենայն վճռականութեամբ: Բացի այդ, մեր միջին փայլավճարի չափը, ինչպես տեսանք, միանգամայն անբավարար է: Բոլոր միջոցները պետք է ձեռք առնվեն, վորպեսզի միջին փայլավճարի չափը զգալի կերպով բարձրացվի: Այդ տեսակետից այդ հարցի վերաբերմամբ շատ կարևոր նշանակություն ունեն չափորոշիչ 1926-27 տնտեսական տարվա ստուգիչ թվերը: Վորոշումն ասում է. այս տարվա ընթացքում միջին փայլավճարի չափը Յերեւանի և Ալլավերդու բանկոռայներում պետք է հասցըրվեն 10 ռուբլու: Ղափանի և Անիի բանկոռայներում՝ 7 ռ. 50 կ., գավառական կենտրոններում՝ 7 ռ. և գյուղական ցանցում՝ միջին փայլավճարի չափը պետք է լինի 3 ռ. 58 կոպեկի փոխարեն 7 ռ. 25 կոպ.: Այս ստուգիչ թվերի իրագործումը մեզ վրա շատ մեծ պարտականություն է դնում և մենք բոլոր ջանքերը պետք է գործադրենք, վորպեսզի իրագործենք այն ամբողջությամբ:

Վորպեսզի սպառողական կոոպերացիայի ապրանքաշրջանառության հետագա նվաճումները չվտանգվեն նրա ֆինանսական սահմանափակ հնարավորությունների պատճառով, — մասնավանդ վոր մոտիկ ապագայում մենք առանձին հույս չենք կարող ունենալ նոր և լրացուցիչ բանկային բյուռոթետային վարկեր ստանալու վրա — անհրաժեշտ է, վոր մեր ամբողջ ցանցը սեփական միջոցների ուժեղացման հարցը, գլխավորապես փայլավճարների դանձման ճանապարհով, դարձնի իր գործնական անելիքներից ամենակարևորը և հարվածայինը:

Հիմնական գրամագլուխը յեվ ցրա աճումը: Սպառողական կոոպերացիայի սեփական միջոցների յերկրորդ գլխավոր աղբյուրներից մեկն էլ հանդիսանում են նրա հիմնական զրամագլուխները: Հիմնական զրամագլուխները գլխավորապես գոյանում են առևտրից գոյացած նորմալ ռուսներից — կուտակումներից: Տեսնենք ինչպիսի՞ աճում է ունեցել հիմնական զրամագլուխը մեր ցանցում: 1924 թվի հունվարի 1-ին հիմնական զրամագլուխ յեղել է 11,932 ռ., իսկ 1926 թ. հոկտեմբերի 1-ին նա դարձել է 404,060 ռուբլի, բացի 1925-26 տնտ. տարվա 291.362 ռուբլի ընդհանուր շահից: Ինչպես տեսնում ենք, բավականին աճել է հիմնական զրամագլուխը, սակայն, հետաքրքիր է պարզել, թե մեր կոոպերացիան ինչպիսի կուտակումներ է ունեցել շրջանառության ինքարժեքի նկատմամբ՝ ըստ տարիների: Ստու-

րև բերված տախտակ № 4-ը այդ տեսակետից հետաքրքիր պատկեր է ներկայացնում:

Աղյուսակ № 4

Տ Ա Ր Ի Ն Ե Ր	Ապրանքային շրջանառութ.	Տարեկան ոգուտ	Կուտակման տոկոսներ
1924 թ. հունվարի 1-ին	1.120 000	11.932 ռ.	1,06 ⁰ / ₀
1925 թ. հոկտեմբերի 1-ը	8.612.156	150.938 »	1,75 »
1926 թ. հոկտեմբերի 1-ը	13.564.968	291.363 »	2,14 »

Այս տախտակից պարզ յերևում է, վոր մեր սպառողական կոոպերացիայի կուտակման տոկոսները՝ տարեկան շրջանառության նկատմամբ, 2⁰/₀-ի սահմաններում են մնում — մի հանգամանք, վոր մեր ցանցի համար պետք է համարել նորմալ և ընդունելի: Այս հաճախմեք առանձնապես պես է արձանագրվի, վորպեսզի մեր կոոպերացիան չմեղադրվի չափազանց խոցուր կուտակումներ աճելու բաղափակումը մեջ:

Սպառողական կոոպերացիան վոչ միայն պետք է աշխատի անդեֆիցիտ՝ իր առևտրական քաղաքականություն մեջ, այլ և անհրաժեշտ է, վոր նա ունենա վորոշ նորմալ կուտակում: Առանց այդ կուտակման սպառողական կոոպերացիան ի վիճակի չի լինի մեր ժողովրդական տնտեսության ընդհանուր վերելքի հետ զուգընթաց աճելու և զուրկ կը լինի մասնավոր շուկայի հետագա նվաճման գործը շարունակելու հնարավորությունից: Նորմալ կուտակման անհրաժեշտություն մասին XIV-րդ կուսկոնֆերանսի վորոշումն ասում է. «կոոպերացիայի առաջ կանգնած է ֆինանսական տնտեսության կարգավորման և կոոպերատիվ միջոցների կուտակման խնդիրը»:

Սակայն սպառողական կուտակումները պես է հետեված լինեն ցրա առողջ գործունեության, ապարասի բացիոնալիզացիայի, գլխավորապես ի հաճիվ առեվտրական ծախսերի կրճատման յեվ վոչ քե ի հաճիվ ապրանքների վրա յեկած բարձր վերագիրների:

Մասնավանդ այժմ՝ գների իջեցման խոշորագույն քաղաքականություն պայմաններում, այս ճշմարտությունը առանձնապես պետք է շեշտվի:

Նկատի ունենալով մանրածախս գների իջեցման անհրաժեշտությունը, Հայկոտպի ընդունած 1926-27 տնտես. տարվա ստուգիչ թվերը մեր ցանցի համար, վորպես կուտակման նորմա, ընդունել են շրջանառության ինքնարժեքի նկատմամբ յեկուտոկոս միայն:

Սեփական յեվ ոտար միջոցների փոխհաշվարկությունը:
Կոոպերացիայի ֆինանսների առողջ կառուցվածքի տեսակետից շատ մեծ նշանակություն ունի սեփական և ոտար միջոցների փոխհաշվարկության խնդիրը: Անկասկած պառկոտպերացիայի ֆինանսների առողջության համար շատ անհրաժեշտ է, վոր նրա շրջանառության մեջ շոշափելի տոկոս կազմեն սեփական միջոցները: Մանավանդ մեր պայմաններում՝ յերբ կոոպերացիայի նկատմամբ կիրառվող պետաբյուրոկրատիայի և բանկերի կողմից վարկավորման քաղաքականությունը կայուն չէ և յենթարկվում է հաճախակի փոփոխության, վոր մեծ մասամբ կատարվում է ի հաշիվ գոյություն ունեցող վարկերի կրճատման:

Այժմ տեսնենք, թե մեր ցանցում ինչպիսի տեղեկություններով և զարգանում և ի՞նչ պատկեր է ներկայացնում սեփական և ոտար միջոցների փոխհաշվարկությունը: Նախ՝ տանք սեփական և ոտար միջոցների աճումը ըստ տարիների:

Տախտակ № 5

ԱՄՐՈՂՋ ՑԱՆՑՈՒՄ	Ա. 1924 թ. հոկտ. 1-ը	Ա. 1925 թ. հոկտ. 1-ը	Ա. 1926 թ. հոկտ. 1-ը	0/0-ային աճում
Սեփ. միջոցներ	196.506	528.680	930.688	473 ⁰ / ₀
Ոտար միջոցներ	846.000	1.411.035	1.688.771	200 ⁰ / ₀

Այս տախտակը ցույց է տալիս, վոր սեփական միջոցները աճել և 473 տոկոսով, իսկ ոտար միջոցները՝ 200⁰/₀-ով միայն:

Այս յերեւոյթի դրական և՛ բնորոշ կողմն այն է, վոր սեփական միջոցները ավելի մեծ չափով են աճում, քան ոտար միջոցները: Այս թվերը միաժամանակ ապացուցում են նաև այն իրողությունը, վոր կոոպերացիայի նկատմամբ բանկային և ապրանքային վարկերի վորոշ սեղմում է կատարվում: Այնուամենայնիվ մենք պետք է աշխատենք, վորպեսզի մեր ցանցի

սեփական միջոցների տեսակարար կշռի ուժեղացման առողջ պրոցեսը հետագայում ևս շարունակվի:

Մեր կոոպերացիայի սեփական և ոտար միջոցների փոխհաշվարկությունը ավելի մանրամասն, ըստ կոոպերատիվ տեսակների, տալիս է ստորև բերած տախտակը:

Տախտակ № 6

ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐ	1925 թ. հոկտ. 1-ը		1926 թ. հոկտ. 1-ը	
	Բալանս-սում	Շրջանառության մեջ	Բալանս-սում	Շրջանառության մեջ
Գյուղական կոոպեր.	1:1,3	1:1,8	1:0,9	1:1,1
Գործարան. »	1:1,8	1:1,9	1:1,4	1:1,9
Գավառ. կենտ. »	1:2,2	1:5,0	1:1,5	1:2,6
Բանկոոպներ	1:10,0	1:77,0	1:5,8	1:12,0
Ամբողջ ցանցում	1:2,6	1:4,3	1:1,8	1:2,6

Այս թվերը ցույց են տալիս, վոր 1925 թ. հոկտեմբերի 1-ին մեր ցանցն իր բալանսում մեկ ուրբուղ գիմաց ունեցել և 2 ո. 60 կ. ոտար միջոցներ, իսկ 1926 թ. հոկտ. 1-ին՝ մեկ ո. գիմաց մնացել և 1 ո. 80 կ.: Նույն բանը մենք տեսնում ենք շրջանառության մեջ գտնվող գումարների նկատմամբ: 1925 թ. հոկտեմբերի 1-ին մեկ ո. սեփական միջոցների գիմաց՝ մինչև 4 ո. 30 կ., իսկ 1926 թ. հոկտ. 1-ին նա իջել է մինչև 2 ո. 60 կ.: Մեր ցանցի շրջանառության մեջ գտնվող գումարների աճումը շատ առողջ յերեւոյթ է, վորը ցույց է տալիս աշխատանքների վորակի բարձրացում, և այն, թե կոոպերացիայում քնած և անշարժ միջոցները լիկվիդացիայի յեն յենթարկված: Այս անհրաժեշտ աշխատանքը հետագայում ևս անհկուն կերպով պետք է շարունակվի: Այստեղ չափազանց մեծ նվաճում կատարել են մեր բանկոոպները: Այսպես՝ 1925 թ. 1/ք ին շրջանառության մեջ իրենց մեկ ուրբուղ գիմաց ունեցել են 77 ո. ոտար միջոցներ, իսկ 1926 թ. 1/ք-ին վերջիններս իջել է մինչև 12 ո.: Պետք է նկատել, վոր բանկոոպներն, իրենց աշխատանքների առանձնահատուկ և դժվարին պայմանների շնորհիվ՝ միշտ էլ ոտար միջոցների կարիք են դպացել և զգալու յեն ավելի մեծ չափով, քան մեր մյուս կոոպերատիվները:

Սակայն, կոոպերացիայի ֆինանսական դրությունն առողջ

շացման տեսակետից, մեծ նշանակություն ունի նրա միջոցների շրջանառության արագությունը: Այդ տեսակետից վերոշ առողջացում կատարված է մեր ցանցի աշխատանքի մեջ: Այսպես, 1924—25 տնտ. տարում ապրանքային շրջանառության միջոցների արագությունը հավասար էր 49 որվա, իսկ 1925—26 տնտ. տարում նրա արագությունը հասել է 43,3 որվա, իսկ ընդհանուր շրջանառության միջոցների արագության 69 որվա փոխարեն՝ մենք ունենք 55,3 որ: Միջոցների շրջանառության արագության տեսակետից առաջին տեղը բռնում են մեր բանկոտայները (Յերևան):

1924—25 տնտ. տարում բանկոտայների ընդհանուր միջոցների շրջանառության արագությունը յեղել է 58 որ, իսկ 1925—26 տնտ. տարում դարձել է 49,3 որ: ապրանքային շրջանառության արագությունը՝ 49 որվա դիմաց, դարձել է 40,6 որ: Բանկոտայները շնորհիվ այս առավելության է, վոր կարողանում են նվազագույն սեփական միջոցներով կատարել համեմատաբար մեծ շրջանառություն, ոգտվելով ավելի մեծ չափերով ոտար միջոցներից: Մեր ցանցի շրջանառության միջոցների արագացման պրոցեսը պետք է շարունակվի, և նա շատ դրական հետևանքներ կունենա ցանցի ֆինանսական գործունեության առողջացման համար:

Սպառնալիքների ֆինանսական առողջ քաղաքականության համար մեծ նշանակություն ունի նաև **գեբիսորական** հաշիվների այս կամ այն վիճակը: Այդ տեսակետից մեր ցանցը այնքան էլ բավարար վիճակում չի գտնվում: Այսպես՝ մեր ցանցի 1925 թվի առ 1-ն հոկտեմբերի միացյալ հաշվեկշռի մեջ դեբիտորական հաշիվները կազմում էին 341,261 ոտուրլի, իսկ առ 1-ն հոկտեմբերի 1926 թ. այդ գումարը հասնում է մինչև 483,621 ոտուրլու: Յեթե վերցնենք տոկոսային հարաբերությունը՝ հաշվեկշռի ընդհանուր գումարի նկատմամբ, պետք է ասել, վոր այդ հարաբերությունը վատացել: Այսպես, 1925 I/X-ին դեբիտորների հաշիվը բալանսի ընդհանուր գումարի մեջ կազմում էր 17,6⁰%, իսկ 1926 I/X-ին նա բարձրացել է 18,5⁰%-ի: Ճիշտ է, դեբիտորական հաշիվների մեջ բավականին խոշոր տոկոսը կազմում են արագ շրջանառության գումարները, սակայն կան նույնքան մեծ, գեղար շարժվող և անշարժ գումարներ: Դեբիտորական հաշիվների նվազեցման և նրանց առողջացման գործը մեր ցանցի ամենակարևոր աշխատանքներից մեկն է, վորի վրա, հարկ է, վոր առանձին ուշադրություն դարձվի գործնական աշխատանքների ընթացքում:

Վ. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Շրջանառությունը.— Սպառնալիքների կոոպերացիայի առևտրական շրջանառությունը տարեց տարի շոշափելի նվաճումներ է ունեցել և այդպիսով դարձել է մեր յերկրի ժողովրդական տնտեսության առաջնակարգ տնտեսական կազմակերպություններից մեկը: Ստորև բերված տախտակը ցույց է տալիս մեր ցանցի ապրանքաշրջանառության աճեցումը:

(Տես աղյուսակ № 7, 28-րդ յերեսում):

Այս թվերից յերևում է, վոր ապրանքամատակարարման գործը գյուղի և քաղաքի նկատմամբ համաչափ կերպով չի ընթացել: 1924 թվականին նա ունեցել է բավականին խոշոր վայրուվերումներ: Սակայն 1925 և 26 թվականներին վորոշ կայունացում է նկատվում և ապրանքամատակարարման գործն սկսում է մտնել իր բնական հունի մեջ: Վերջին յերկու տարիների ընթացքում գյուղական կոոպերացիան սկսում է բռնել առաջին տեղը՝ շրջանառության 41 տոկոսը, այնուհետև, բանկոտայները՝ 35⁰%, ապա գավառական կենտրոնները՝ մոտ 14 տոկոս— մնացածը գործարանային կենտրոններին է մնում:

Ապրանքային կալոգությունը (ճագուզկաճ).— Սպառնալիքների կոոպերացիայի առևտրական քաղաքականության առողջացման տեսակետից մեծ կշիռ է ներկայացում այն հարցը, թե գոյություն ունեցող կոոպերատիվ ապագարատն ապրանքային ինչ չափով է ապահոված կարողությունը: Ապրանքային կալոգության կարևոր խնդրի հետ սերտորեն կապված են ապագարատի ճկունությունը և նրա եժաճ լինելու հարցերը, վորոնք իրենց հերթին կապված են կոոպերատիվի առևտրական ծախսերի բարձր կամ ցածր լինելու հետ: Այդ է պատճառը, վոր կոոպերացիան համապատասխան կազմակերպությունների առաջ համառորեն հարց է բարձրացնում գուգահեռ առևտրական

Տախսակ № 7							
Կոտայեցիական հանրապետություն	Ամ 1994 թ. դեկտեմբերի 1-ի	ձմեռային-0/0/0	Ամ 1994 թ. դեկտեմբերի 1-ի	Ամ 1994 թ. դեկտեմբերի 1-ի	Ամ 1995 թ. դեկտեմբերի 1-ի	ձմեռային-0/0/0	Ամ 1995 թ. դեկտեմբերի 1-ի
Փողոցական կապ.	467,000	41,7	1,030,000	28,0	3,616,149	41,9	5,547,455
Փողոցական կապի կապ.	194,000	17,3	555,000	15,0	265,075	11,1	859,523
Փողոցական կապ.	459,000	41,0	2,115,000	57,0	1,705,309	12,0	2,426,336
Բանկային	1,120,000	100	3,700,000	100	8,612,156	100	13,504,968
Ամբողջ ցանցում							

կազմակերպությունների լիկվիդացիայի մասին, մատնանշելով նրանց գոյություն աննպատակահարմարությունը:

Այս խնդիրն առանձնապես սուր բնույթ է ստանում առաջ-

հակարգ ապրանքների սովի պայմաններում և մանավանդ այն վաճառքում, ուր սպասողական կողպերացիան այնքան և ուժեղացած, ինչ որ Վիճակի յե տմբողջապես սպառելու գոյության ունեցող ապրանքները:

Տեսնենք ինչպիսի պատկեր է ներկայացնում մեր ցանցի ապրանքային կառուցվածքը (նազարդեցիկ)։

Susumuly № 8

ՏԱՐԻՆԵՐ	Ընդհանուր ապրանքաշրջանառություն		Պանուխների միջին թիվը տարվա մեջ		Մեկ խանութի միջին ապրանքային կառույթ թյունը	
	Գումար	0/0/0	Գումար	0/0/0	Գումար	0/0/0
1924—25 տնտ. տարի . . .	8,612,156	100,0	228,0	100,0	39,482	100,0
1925—26 տնտ. տարի . . .	13,564,968	157,0	295,6	135,2	45,489	116,2

Այս տախտակից պարզվում է, Վոր ամեն մի խանութի ապրանքային կալոդուծյունն աճել է 16,2 տոկոսով միայն, այն ժամանակ, յերբ ապրանքային շրջանառությունն աճել է 57,5 տոկոսով: Կոոպերացիայի ապագարատի ապրանքային կալոդուծյան նվազ չափով աճելը, շրջանառության նկատմամբ՝ անշուշտ, բացասաբար է անդրադարձել թե նրա առևտրական ծախսերի վրա և թե թուլացրել է կոոպերացված մասսաների ուղառողական պահանջների բավարարման գործը:

Կոոպերացիայի դերը յերկրի ապրանքաշահառուլքան մեջ. — Չնայած սպառնկոպերացիան իր առևտրական գործունեյութեան համար անցյալ տնտեսական տարւիւմ ընթացքում ունեցել և անբարենհաջող պայմաններ, ինչպիսին և անբաժնշտ ապրանքների զգալի պակասութիւնը, — գլխավորապէս մանուֆակտուրա, յերկաթեղեն և մի շարք այլ ապրանքներ, — այնուամենայնիւ, կոոպերացիայի տեսակարար կշիռը շուկայում աճել և վոչ միայն արսույուտ թվերով, այլ և հարաբերորեն: Ստորեւ բերված տախտակը ցույց և տալիս կոոպերացիայի տեղը և նշանակութիւնը յերկրի ապրանքաշրջանառութեան մեջ:

Տախտակ №

Տարիներ	Յերկրի ընդհանուր մանրածախս առևտուրը		Շրջանառության մեջ մասնակցող կազմակերպութ.			Սպառողսերացիայի մանրածախս առևտուրը		
	Գումարներ (հազար.)	Աճումը	Կապի-րացիա	Պետա-ստուր	Մասնա-վոր	Գումարը (հազար)	Աճում	0/0-ին ընդ. շրջ.
1923—24 տնտ. տարի	19,500,0	100	30,8	7,7	61,5	—	—	—
1924—25 տնտ. տարի	24,500,0		44,9	9,4	45,7	8,612,0	100	35,1
1925—26 տնտ. տարի	34,300,0		49,0	11,7	39,2	13,564,9	157,5	39,5

Այս թվերը մեզ ասում են, Վոր կոպերացիայի գերը՝ 1924—25 տնտեսական տարվանից սկսած մինչև 1925—26 տնտ. տարին՝ յերկրի ընդհանուր շրջանառության մեջ 30,8 տոկոսից բարձրացել է մինչև 49,0 տոկոս, Վոր, ի հարկե, պետք է համարել շոշոփելի նվաճում։ Կոպերացիայի ընդհանուր շրջանառության մեջ սպառողսերացիան զբաղում է 39,5 տոկոս։

Մասնավոր շուկայի հետագա զբաղման գործը մեր կոպերացիան պիտի շարունակի։ Այսպես՝ Պետպլանի և Հայկոպի 1926—27 տնտեսական տարվա ստուգիչ թվերի համաձայն, կոպերացիան ընդհանրապես և մասնավորապես սպառողսերացիան, պետք է հետևյալ նվաճումներն ունենան. —

Տախտակ № 10

Տ ա ռ ի	Ամբողջ կոպեր	Միայն սպառող կոպեր.	Պետական առևտուրը	Մասնավոր առևտուրը	Ընդհանուր շրջանառ.
1926—27 տնտ. տարի	21,200.000	18,500.000	4,900.000	15,000.000	41,000.000
Տոկոսները . .	51,6%	41,1%	11,9%	36%	100%

Թվերից յերևում է, Վոր վողջ կոպերացիան շրջանառության մեջ անցյալ տարվա նկատմամբ 49 տոկոսից բարձրանալու է մինչև 51,6 տոկոսի։ Աճումը արտայայտվում է 2,6 տոկոսով միայն, իսկ սպառողսերացիայի տեսակարար կշիռը

յերկրի շրջանառության մեջ այս տարվա ընթացքում ավելի է մեծանալու։ Անցյալ տարվա 39,5 տոկոսը բարձրանում է մինչև 45,1 տոկոսի։ Աճումը արտայայտվում է 5,6 տոկոսով։

Սպառողսերացիայի գերը մասնավոր շուկայում՝ մի շարք սակավ ապրանքների նկատմամբ, ինչպեսին է մասնափակառարան, յերկաթեղենը և այլն, ավելի մեծ չափերով է արտահայտվում։ Նա հասնում է մոտ 70—80%—ի։ Այս յերևույթը բացատրվում է նրանով, Վոր սպառողսերացիան այդ ապրանքների ներմուծման նկատմամբ գերակշռող վիճակի մեջ է, Վորը հետևանք է այդ ապրանքների սակավության։

Կոպերացիայի յեվ մասնավոր շուկայի գները. — Սպառողսերացիայի նշանակությունը մեր ժողովրդական տնտեսության մեջ վորոշելու համար մեկ կողմից և մյուս կողմից սպառող մասսաներին եժան և շահավետ կերպով ծառայելու տեսակետից, շատ կարևոր է պարզել, թե ինչպիսի գներ գոյություն ունեն կոպերացիայում և մասնավոր շուկայում և ինչ տարբերություն կա նրանց մեջ։ (Տես աղյուսակ № 11, 32-րդ յերեսում)։

Յեթե մենք վերցնենք մանրածախս առևտրի միջին գները Հայաստանում, Վորը բերված են 1925—26 տնտեսական տարվա յերեք ժամանակաշրջանում՝ միշտ և բոլոր ապրանքների նկատմամբ կոպերատիվ գները ցած եե մասնավորների գներից։ Այսպես որինսակ՝ մասնավորների գներն 1925 թ. I/X-ին բարձր են կոպերատիվի գներից 6,7%-ից մինչև 22,2%-ով 1926 թ. I/VI-ին՝ 5,8%-ից մինչև 33,5%-ով և 1926 թ. I/X-ին 7,1%-ից մինչև 35,7%-ով։ Ինչպես տեսնում ենք, սպառողսերացիան հետզհետե, ամենայն հետևողականությամբ, իր մանրածախս գներն իջեցնում է մասնավորի նկատմամբ և տարբերությունը քանի գնում ավելի մեծ է դառնում։ Ինչպես ցույց են տալիս բերված թվերը, մասնավորների գներն, ընդհակառակը, չեն իջնում, ավելի շուտ նրանք բարձրանում են։ Այսպես՝ 1925 թ. I/X-ի ապրանքների գները՝ համեմատած 1926 թ. I/X-ի նույն ապրանքների գների հետ, 7 ապրանքից 5-ի գները բարձրանում են և միայն 2-ինը իջնում են աննշան կերպով։

Բացի այդ, սպառողական կոպերացիան Հայաստանի ապրանքաշրջանառության մեջ իր տեսակարար կշիռն մեծությամբ զեկավարում է ու տոն է տալիս մասնավոր շուկային, հարկադրելով վերջինին ամփոփվել շատ վորոշակի սահմանների մեջ, զրկելով նրան իրեն հատուկ սպեկուլիատիվ սանձարձակություններից։

Ապրանքների անունը	ձևագրություն	1925 թ. հոկտեմբ. 1-ը			1926 թ. ապրիլի 1-ը			1926 թ. հոկտեմբերի 1-ը		
		001 պլանի վիճակ -ում գտնակ	Գինը	W առն ա վ ո ռ ը %	001 պլանի վիճակ -ում գտնակ	Գինը	W առն ա վ ո ռ ը %	001 պլանի վիճակ -ում գտնակ	Գինը	W առն ա վ ո ռ ը %
Չեթ № 6 իվ-վազ.	Մետր	45	55	122,2	45	56	124,4	44,7	53,	118,5
Մեխ-3 »	Ֆունդ.	17,8	21	117,9	18,2	24,3	133,5	19,8	23,6	119,1
Շաքար բաֆինադ.	»	34,2	36,5	106,7	34,1	36,1	105,8	33,8	36,2	107,1
Նավթ.	»	6	7	116,6	5,6	6,8	121,4	5,6	7,6	135,7
Աղ քար.	Փուխ	82	96	117,0	83,5	101,6	122,8	81,5	102	125,1
Լուցիկ	10 հատը	15,8	18	113,9	15,6	19,4	124,3	15,4	19,3	125,3
Մսորն Հայկապոլի	Կտոր	20,5	22	107,3	23,5	27,2	115,7	26,5	31,5	118,8

**Սպառկողության յեվ մանրածախս պեսական առեվ-
տուրը.**— Սպառկողության մեր յերկրում այնքան է զարգացել
ու ծավալվել, վոր նրա հետագա անարգել զարգացումը, մասնա-
վորապես մանրածախս առևտրի բնագավառում, կհանդիպի
լուրջ խոչընդոտների, յեթե մեզ մոտ գոյություն ունեցող **գու-
գահեռ պեսական մանրածախս առեվտուրը** շարունակի իր այ-
ժմյան գոյությունը: Սպառկողության յի և պետական մանրա-
ծախսի պարալիլիզմի վերացման շուրջը տեղի ունեցող պայքարը
շատ վաղուց է, վոր շարունակվում է: Այժմ կարելի յե վստա-
հությամբ ասել, վոր նա ապրում է իր վախճանը և պետական
մանրածախսի իր դիրքերը զիջում է հաստատ քայլերով առաջ
գնացող կողմերացիային: Մեր կուսակցության բազմիցս կայա-
ցրած վորոշումները՝ պետական մանրածախսը վերացնել այն
վայրերում, ուր սպառկողության ուժեղ է և յի վիճակի յե
փոխարինել պետական մանրածախսին, այժմ գործնականապես
իրականանալու վիճակում է գտնվում:

Հայաստի վարչությունը վորոշել է լուծարքի յենթարկել իր
մանրածախս առևտուրն ամբողջ Հայաստանում: Առաջին հեր-
թին վերացվում են Ստեփանավանի, Վարանցովկայի, Դիլիջա-
նի, Զանգեզուրի և Նոր-Բայազետի մանրածախսը, վորոնց ֆունդ-
ցիաներն իր վրա վերցնելու համաձայնությունը սպառկողա-
բացիան վաղուց է ինչ տվել է: Մեր կողմերատիվները տնտե-
սական առանձին գովարություններ կրել չեն կարող, քանի
վոր Հայաստի մանրածախսն այդ շրջաններում մեծ դոմարների
չի հասնում: Այսպես՝ նրանց Ստեփանավանի և Վարանցովկայի
բաժամունքները 1926—27 տնտ. տարվա հոկտեմբեր-հունվար
ամիսներին ունեցել են 65—76 հազար ուրու շրջանառություն.
ամիսը 15—20 հազար ուրուի միայն: Նույնպիսի անշան շրջա-
նառություններ են ունեցել նաև մյուս բաժանմունքները: Որի-
նակ՝ նույն ժամանակաշրջանում Դիլիջանի բաժանմունքն ամիսը
արել է մոտ 800 ուրու շրջանառություն, Նոր-Բայազետինը՝ 5000 ո.,
Ուղանթալինը՝ 4000 ո. անցյալ տարի ամբողջ Զանգեզու-
րում, ուր մենք ունենք յերեք շատ ուժեղ շրջանային կողմերա-
տիվներ, Հայաստը արել է ամիսը միջին թվով 30,000 ո. շրջանա-
ռություն: Վերոհիշյալ բոլոր շրջաններում գործող մեր կողմե-
րատիվները, բացառությամբ Ուղանթալինի, շատ ուժեղ ընկե-
րություններ են և անսահման հնարավորություն ունեն փո-
խարինելու լուծարքի յենթակա Հայաստի մանրածախսը:

Այստեղ շատ հետաքրքիր է և ուսանելի շատերի համար, — վորոնք չափազանց պահպանողական են պետական առևտրի մանրածախսը լուծարքի յենթարկելու հարցում, — վոր առաջ բերենք Հայաստանի և Ստեփանավանի կոոպերատիվի գործունեության համեմատության մեկ նմուշ: Այդ համեմատությունը վերաբերում է Ստեփանավանի Հայաստանի և կոոպերատիվի գործունեությանը, վորոնք վերջնականապես ձևակերպված կազմակերպություններ են և անպայման բնորոշում են յերկու սխտեմների **Իրական պատկերը՝** ամբողջ հայաստանում:

Աղյուսակ № 12 *)

Յ Ո Ւ Յ Ա Ն Ի Շ Ն Ե Ր	Ստեփանավանի Հայաստան	Ստեփանավանի կոոպերատիվը
1. Ապրանքների շրջանառության արագություն.	90 որ	30,8 որ
2. Շրջանառութ. միջոցների շրջանառ. արագ.	144 որ	50,36 որ
3. Առևտրական ծախսերի %/0-ը շրջանառության ինքնարժեք	12,7 ⁰ / ₀	7,7 ⁰ / ₀
4. Հավելումների տոկոսները ապրանքների վրա ինքնարժեք.	14,5 ⁰ / ₀	12,2 ⁰ / ₀
5. Շահ և փաստ	-21,873ր. 19 Կ. փաստ	+16,400ր. 74 Կ. Շահ

Մեզանում՝ բացի Հայաստանի մանրածախսի գոյությունից՝ կան նաև կոոպերատիվ կազմակերպություններ, վորոնք զուգահեռ կերպով գործում են վորոշ վայրերում և անպայման խանգարում մեր կոոպերատիվների նորմալ գործունեությունը: Խոսքս վերաբերում է ՅԱԿՏՈ և «Боец»-ի կազմակերպությունների գոյությանը: ՅԱԿՏՈ-ն բաժամունքներ ունի Յերևանում, Լենինականում, Ղարաքիլիսայում, վոչ թե յերկաթգծի վրա, ուր պետք է լինեն իրենց կոչումով, այլ քաղաքներում: «Боец»-ը բաժամունքներ ունի Լենինականում և Աննիի կայարանում: Այդ բաժամունքներն անում են աննշան շրջանառություն և այդ լինում է մեր կոոպերատիվների շրջանառության հաշվին: Հարկ չկա պնդելու, վոր Յերևանի, Լենինականի, Ղարաքիլիսայի և Աննիի մեր կոոպերատիվները հնարավորություն ունեն փոխարինելու նրանց կատարած պարտականությունները՝ թե մասնավոր շու-

*) Բանվորագյուղացիական տեսչության տվյալներից. արձանագրություն, հաստատված կոլլեգիայի կողմից 1927 թվի մարտի 20-ին:

կայի և թե նրանց փոքրամիջի անդամների շահերին ծառայելու տեսակետից: Մեր կոոպերատիվ ապարատի բացիոնալիզացիայի համար չափազանց անհրաժեշտ է կոոպերատիվ պարալիլիզմի վերացումը:

Առևտրական ապարատի բացիոնալիզացիայի տեսակետից՝ զուգահեռ կազմակերպությունների լուծարքն, անշուշտ, շատ մեծ, պետական արժեք ներկայացնող գործ է, սակայն՝ դրանով շատ մեծ պատասխանատվություն է դրվում ապակոոպերացիայի վրա: Մենք պետք է նախապատրաստվենք և բոլոր ուժերը գործադրենք, արդարացնելու այն ամբողջությունը:

Ֆանցի ապրանքների գնման աղբյուրները.—Շատ հետաքրքիր է, թե մեր կոոպերատիվներն իրենց ապրանքներն ինչպիսի կազմակերպություններից են գնում, առանձնապես կարևոր է իմանալ, թե իրենց միություն «Հայկոպի» հետ տնտեսապես վոր չափով են կապված:

Աղյուսակ № 13

ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԸ	1924—25 տնտ. տարին			1925—26 տնտ. տարին		
	Հավելում և կր. բաժանելը	Պետական կազմակերպ. մակերկրվ.	Այլ կոոպ. աղբյուրներից	Հավելում և կր. բաժանելը	Պետական կազմակերպ. մակերկրվ.	Այլ կոոպ. աղբյուրներից
Դյուղական կոոպեր.	—	—	—	49,8	41,5	8,7
Դործարանային ,, . . .	—	—	—	27,1	66,9	6,0
Դավառ. կենտ. ,, . . .	—	—	—	33,4	57,0	9,6
Բանկոոպներ	—	—	—	21,4	67,7	10,9
	25,0	68,0	7,0	34,8	54,7	10,5

Ֆանցի ապրանքամատակարարման գործում Հայկոպի նշանակությունը տարեց-տարի մեծանում է: Այսպես 1924—25 տնտ. տարում նա յեղի է 25,0⁰/₀, իսկ 1925—26 տնտ. տարում բարձրացել է մինչև 34,8⁰/₀-ի. մի տարվա ընթացքում ափեացել է 9,8⁰/₀-ով՝ ի հաշիվ պետական կազմակերպությունների: Տնտեսապես Հայկոպի հետ ափիլի սերտորեն կապված է դյուղական ցանցը՝ 49,8⁰/₀-ով, իսկ ամենից թույլ կապված են բանկոոպները՝ 21,4⁰/₀-ով միայն: Բանկոոպների թույլ

մասնակցութիւնը բացատրելի յե այն մտքով, վոր նրանք, լինելով ուժեղ կազմակերպութիւններ՝ իրենց գնումները կատարում են անմիջական աղբյուրներից: Մեր ցանցի համեմատաբար նվազ տնտեսական կապն իրենց միութեան հետ բացատրում է նաև նրանով, վոր Լոու-Փամբալի, Ղազախի շրջանի և Զանգեզուրի գավառի մի շարք կոոպերատիվները արնտեսապես ավելի կապած են, շնորհիվ իրենց աշխարհագրական դիրքի, Թիֆլիզի և Բագվի շրջանների հետ և իրենց շրջանառութեան մի մասը կատարում են այնտեղի միջոցով:

Հայկոոպի վարչութեան բռնած գիծը՝ վոր ե. ուժեղացնել ու կանոնավորել իր բազաների աշխատանքներն, անտարակույս, մեծ չափով կուժեղացնի ցանցի տնտեսական կապը Հայկոոպի հետ և, վոր գլխավորն է, բազաների շուրջը գտնվող կոոպերատիվներին լայն հնարավորութիւններ կտրվեն կրճատելու իրենց առևտրական ծախսերը, վորոնք կապված են Թիֆլիզ կամ Յերևան մեկնելու անհրաժեշտութեան հետ:

Կոոպերացիայի հավելումները յեվ առեւտրական ծախսերը.— Սպառնալիքաբար անտարակաճ առողջ քաղաքականութեան տեսակետից բացառիկ նշանակութիւն ունի նրա հավելումների և առևտրական ծախսերի տոկոսների խնդիրը: Մանավանդ գների իջեցման քաղաքականութեան ճիշտ և նպատակահարմար կիրառումը վորոշելու համար միակ ճիշտ չափանիշը կարող է լինել կոոպերացիայի հավելումների և առևտրական ծախսերի այս կամ այն նորման: Այժմ տեսնենք, թե մեր կոոպերացիան այդ կարևոր ասպարիզում դարգացման ինչպիսի՞ ընթացք է բռնել:

Աղյուսակ № 14

ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐ	1924—25 տնտ. տարի		1925—26 տնտ. տարի		1926—27 տնտ. տարի	
	Ինքնաբերական մեքի հա- վելումը	Ծախսերը շրջանա- ռութ.	Հավելումը ինքնաբերական մեքին	Ծախսերը ինքնաբերական մեքին	Հավելումը լուսնի ինքնաբերական մեքին	Ծախսերը ինքնաբերական մեքին
Բանկոոպներ	10,9	10,2	11,1	9,7	10,0%	9,0%
Գործարանային կոոպ.	25,5	14,9	12,3	10,1	10,7%	8,0%
Գավառական կենտ. „	18,7	15,7	13,1	10,4		
Գյուղական „	18,8	12,5	12,8	9,6		

Ամենից առաջ այս տվյալները հնարավորութիւն յեն տա-

լիս մեր ցանցի համար անել մի շարք միջոցառական յեղրակացութիւններ: Մի տարվա ընթացքում հավելումներ իջել յեն 18,8—25,5-ից մինչև 12,3-ից 13,1 տոկոս՝ մոտ 6,5 տոկոսով: Իսկ առեւտրական ծախսերը կրճատվել են 12,5—15,7 տոկոսից մինչև 9,6—10,4 տոկոսով: Բացի այդ՝ յեթե մենք նկատի առնենք, վոր 1924—25 տնտ. տարում ծախսերի տոկոսները դուրս են բերված շրջանառութեան վաճառքի գներից և վոչ ինքնարժեքից, այն դեպքում իջեցման տոկոսի տարբերութիւնը մոտավորապես մեկով ավելի կլինի: Այսպիսով ծախսերի կրճատումն արտահայտվում է 3 տոկոսից մինչև 5,3%-ով: Մեր կոոպերացիայի համար այս բոլորը պետք է համարել շատ խոշոր նվաճում: Բանկոոպները (Յերևանի) այս հարցում բացառութիւն են կազմում, վորովհետև նրանց հավելումները յերբեք բարձր չեն յեղել: Ընդհանրապես 1924—25 տնտ. տարում նրանք իրենց բալանսը փակել են ֆրասով—առանց վորևէ կուտակում ունենալու, վորը պետք է համարել միանգամայն անցանկալի դրութիւն:

Վորպեսզի ավելի պարզ լինեն Հայաստանի սպառնալիքաբար նվաճումներն այս կարեւոր բնագավառում, անհրաժեշտ է բերել համեմատական թվեր Ռուսաստանի պրակտիկայից, զուգադրելով համապատասխան կազմակերպութիւններ: Այսպես՝ 1925—26 տնտ. տարում համաձայն «Центросоюз»-ի տվյալների*) գյուղկոոպների հավելումը յեղել է 16% ինքնարժեքի վրա, իսկ մեզ մոտ 12,8%, 3,2%-ով պակաս. իսկ առևտրական ծախսերը նրանց մոտ յեղել են 11,6%, մեզ մոտ՝ 9,6%, 2 տոկոսով պակաս: Բանկոոպներին՝ նրանց մոտ յեղել է 16,9%, մեզ մոտ՝ 11,1%, 5,8%-ով պակաս. ծախսերը նրանց մոտ յեղել են 14,0%, մեզ մոտ՝ 9,7%, 3,3 տոկոսով պակաս: Մատնանշված տարբերութիւնը պետք է համարել շատ զգալի և այդ տեսակետից պետք է ընդունել, վոր մեր ցանցը ցածր բարձր հավելումներ յեվ առեւտրական ծախսեր ունենալու մեջ առաջնորդական դեր է խաղում: Սակայն այս բոլորը չի նշանակում, վոր մենք, մանավանդ գների իջեցման քաղաքականութեան պայմաններում, չպետք է ձգտենք մեր հավելումների և առևտրական

*) „Контрольн. цифры составлен. Потребит. Коопер. на 1926—27 хоз. год“. П. Смилга. „Союз Потребителей“ № 10, октябрь 1926 г.

ծախսերի տոկոսները ել ավելի իջեցնելուն: Այդ ձգտումը լինելու չէ մեր հետագա գործունեություն ամենակարևոր մոմենտներից մեկը: Հայկոպի ընդունած ստուգիչ թվերը 1926—27 ա.ա. տարվա հավելումների և առևտրական ծախսերի նկատմամբ (տես աղյուսակ № 13), արդեն պարզորեն բնորոշում են, թե մենք այդ ուղղությամբ վորքան մեծ աշխատանք ենք ցանկանում կատարել: Այդ ստուգիչ թվերը, վորպես ղեկավարող նորմա գյուղական և զավառական քաղաքների կոոպերատիվների համար՝ վորոշում են հավելում 10,7 տոկոս՝ ինքնարժեքի վրա և 8 տոկոս առևտրական ծախսեր. բանկոոպների համար՝ 10⁰/₀ հավելում և 9⁰/₀ ծախսեր: Այս նորմաները, յեթե համեմատենք անցալ տարվա հավելումների և ծախսերի հետ, այն ժամանակ կտեսնենք, վոր գյուղական կոոպերատիվների հավելումները կիջնեն 2,1⁰/₀-ով, ծախսերը 1,6⁰/₀-ով. զավառական կենտրոններինը՝ 2,4⁰/₀-ով և 2,4⁰/₀-ով, բանկոոպներինը՝ 0,1⁰/₀-ով և 1,9⁰/₀-ով: Յեթե մեզ հաջողվի այս տարի այդ նորմաները ամբողջությամբ կիրառել կյանքում, անտարակույս, դա մեծ առաջադիմություն կլինի:

VI. ԳՆԵՐԻ ԻՋԵՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ

Մեր կուսակցության և Խորհրդային իշխանության այսօրվա քաղաքականության ամենահարվածային և գործնական անելիքներից մեկը հանդիսանում է գների իջեցման հարցը: Գների քաղաքականության հետ հյուսված են մեր յերկրի տնտեսական և քաղաքական բոլոր պրոբլեմները:

Կոսկուսակցության Կենտկոմի 1927 թ. փետրվարյան պլենումը հետևյալ կերպով է բնորոշում գների իջեցման քաղաքականության նշանակությունը. «Խորհրդային պետության ամբողջ տնտեսական քաղաքականության կենտրոնական հանգույցն է հանդիսանում գների քաղաքականությունը, վորը վերջին հաշվով բնորոշում է՝ ա) արդյունաբերության զարգացման թափն ու հեռանկարները և շուկայի ապրանքային՝ ունակությունը, բ) սոցիալիստական կուտակման թափը, գ) մասնավոր կապիտալիստական կուտակման շրջանակը, դ) չերվոնեցի գնողական ունակության ուժը, այսինքն՝ Խորհրդային պետության ամբողջ վալյուտային քաղաքականությունը, ե) բանվորական աշխատավարձի իրական մակարդակը և այլն և այլն: Մեր տնտեսական զրության ներկայիս կարևոր մոմենտը արտահայտվում է նրանով, վոր կուսակցությունը և նրա բոլոր կազմակերպությունները պետք է աշխատեն պահպանել գյուղատնտեսական ապրանքների գների արդեն նվաճված մակարդակը մեկ կողմից և մյուս կողմից՝ ազատեն արդյունաբերության առանձին ճյուղերի պրոդուկցիան սպառման հնարավոր դժվարություններից: Այդ պատճառով պետք է նպատակ գնել իջեցնել արդյունաբերական ապրանքների գներն ավելի խիստ ձեռք, քան այդ յեղեկ և վերջին տարիներում*)»:

Սրանից ակնհիշ է, վոր մեր ամբողջ կոոպերացիայի հասա-

*) Համկոմկուսի Կենտկոմի 1927 թ. փետրվար 7—12-ի պլենումի բանաձևից:

րակակայնությունը պետք է բացառիկ նշանակություն տա գնե-
րի իջեցման գործին և այն գործնականապես իրականացնի
կյանքի մեջ: Պետք է նկատել, վոր մինչև վերջին ժամանակներս
այդ ուղղությունը կատարված աշխատանքներն իրենց հետե-
վանքներով շատ աննշան են: Կոոպերացիայում աշխատողների
կողմից գների իջեցման քաղաքականության կարևորության
խոր ըմբռնում չի յեղել, նրա պատասխանատվության ամբողջ
մեծությունը լրիվ չափով չի հասկացվել և այդ է պատճառը,
վոր մեր աշխատանքների ընթացքում հաճախ մեր կոոպերա-
տորները տեղերում թույլ են տվել շատ կոպիտ շեղումներ: Նման
կացությունն այսուհետև հանդուրժել անկարելի չէ: Սպառնու-
յերացիայի վողջ սխեսմն անվերապահորեն, առանց վոյեվե
առաջնությունների, պեժ է իրագործի մեր կուսակցության քաղա-
քական հրահանգը: Այնուհետև մի շատ վտանգավոր մտայնու-
թյուն գոյություն ունի, վորը պակաս չափով չի փաստում գների
իջեցման հաջողությանը: Մեր կոոպերացիան շատ հաճախ գնե-
րի իջեցման հնարավորության դժվարությունները բացատրում
է կոոպերացիայից դուրս գտնվող խոչնդոտներով և քերա-
զնահանում է իր սեփական պակասությունների վերացման և
իրենից կախված անելիքների անհրաժեշտությունը: Ճիշտ է՝
գների իջեցման համար կոոպերացիայից դուրս խոչնդոտներ շատ
կան, ինչպիսին են՝ 1) զուգահեռ կազմակերպությունների գո-
յությունը, 2) կոոպապարատի ապրանքային կալոցության
(նազրուկայի) անբավարար լինելը, 3) ֆրախտի, ալցիդի, կոմ-
մունալ ծախսերի բարձրացումը, 4) բանկային վարկերի տու-
կոսների բարձր լինելը, 5) ապրանքային և դրամական վարկա-
վորման կրճատումը և նրանց պայմանների վատթարացումը,
6) ապրանքային աստորտիմենտի անհամապատասխանությունը և
այլն և այլն:

Սակայն, անկախ այդ բոլոր որեկտիվ խոչնդոտներից, մեզ-
նից կախված անելիքները գների իջեցման գործում մենք չենք
սպառնալ: Մենք դեռ նոր ենք սկսել մեր ապարատի ռացիոնա-
լիզացիայի գործին անցնելը, մեր առևտրական ծախսերը դեռ
բարձր են, մեր սեփական միջոցների մեծ մասը դեռևս գտնվում
է մեռած արժեքների մեջ և ապրանքների շրջանառության ա-
րագությունը դեռ շատ դանդաղ է, փերջապես դեռևս նման պա-
կասություններ շատ ունենք, վորոնց կարգավորումը մեղնից
շատ ու շատ անելիքներ է պահանջում: Մենք պետք է ամենից

առաջ անխնա և վճռական կռիվ սկսենք մեր սեփական պա-
կասությունների դեմ և յերբ շոշափելի նվաճումներ կունենանք
գների իրական իջեցման հարցում և կսպառնալ մեր սեփական

Աղյուսակ № 15

Ապրանքների անունը	Միավոր միավոր	1/X 25 միավոր	100 միավոր	I/1 26 թ.		I/IV 26 թ.		I/VII 26 թ.		I/X 26 թ.	
				Գինը	0/0/0	Գինը	0/0/0	Գինը	0/0/0	Գինը	0/0/0
1. Չիթ № 6 իվ. վաղ.		Մետ.	45	45,5	101,1	45,	100,0	44,7	99,3	44,7	99,3
2. Բյաղ ուս. 16 վ.		»	58	63,5	109,4	57,7	99,4	54,2	93,4	56,2	96,8
3. Սատինս սև իվ. վաղ.		»	75	77,5	103,3	75,6	100,8	72,2	96,2	74	98,6
4. Մեխ 300		Ֆ.	17,8	18	101,1	18,2	102,2	18,3	102,8	19,8	111,2
5. Շաքար բաֆինադ		»	34,2	34,3	100,2	34,1	99,7	33,8	98,8	33,8	98,8
6. » պետիկ		»	29,3	29,5	100,6	29,3	100,0	28,9	98,6	29	98,9
7. Նավթ . . .		»	6	5,7	95,0	5,6	93,3	5,6	93,3	5,6	93,3
8. Ոճառ Հայկոպի		Հատ.	20,5	22,3	108,7	23,5	114,6	28,8	120,9	26,5	129,2
9. Լուցիկ 10 հատ		10 հ.	15,8	16	101,2	15,6	98,7	15,4	97,4	15,4	97,4
10. Ս. դ . . .		Փութ	82	84	102,4	88,5	101,8	80,3	97,9	81,5	99,3
11. Բրինձ . . .		»	620	780	125,8	759	122,4	775	125,0	1070	172,5
12. Ալյուր I տ. . .		»	382	373	97,6	395	103,4	412	107,8	410	107,9

անելիքներն, այն ժամանակ ավելի մեծ իրավունքով հրապա-
րակի վրա կդնենք այն բոլոր հարուցվող դժվարությունները,

որ կոոպերացիայի համար ստեղծում են այլ պետական կազմակերպությունները (սինդիկատներ, տրեստներ, բանկեր և այլն):

Այժմ տեսնենք՝ 1925—26 տնտ. տարում մեր ցանցն ինչ աշխատանքներ և կատարել գները իջեցման ասպարիզում: Ամենից առաջ կարևոր և նկատելի, վոր Հայաստանում գների իջեցման գործը շատ ուշ սկսվեց—մոտավորապես ոգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Կատարված աշխատանքի հաշվառում ունենք, այն ևլ վոչ լրիվ, առ 1-ն հոկտեմբերի 1926 թ.: Մանրածախս գների իջեցման տեսչեկները ակներև են ստորև բերված տախտակից: (Տես տախտակ № 15, յերես 41).

Այս տախտակից յերևում է, վոր 12 կարևոր ապրանքներից

Աղյուսակ № 16

№	Ապրանքների գները	Կատարված գները	Առ 1-ը հոկ. 1925 թ.			Առ 1-ը հոկ. 1926 թ.		
			Առ գները	Հաշվարկ գները	Կատարված գները	Առ գները	Հաշվարկ գները	Կատարված գները
1	Չիթ № 6 իվ. վազ. . .	Մեար	100	100	100	101,5	89,8	93,3
2	Թեկ կոճի № 40 «Цеп»	Գրբոս	100	100	100	102,9	108,8	98,1
3	Մեկ 3-րդ	Փութ	100	100	100	107,7	96,6	111,2
4	Շաքար բաֆինադ . .	»	100	100	100	97,7	96,9	98,8
5	Նավթ սպիտակ . . .	»	100	100	100	100	100	93,3
6	Աղ քարի	»	100	100	100	100	100	99,3
7	Լուցկի	Արկղ	100	100	100	100	103,1	97,4
8	Ոճառ Հայկոպի . . .	Հատր	100	100	100	129,8	129,8	129,2
9	Այլուր 1-ին տեսակ .	Փութը	100	100	100	111,7	103,3	107,3

8-ի գները իջնում են: Յեթե մենք 1925 թ. I/X-ի գները ընդունենք վորպես 100, այն ժամանակ 1926 թ. I/X-ին նույն ապրանքների գները իջեցումը արտահայտվում է 0,7%-ից մինչև 6,7%-ով: Մնացած 4 ապրանքի գները բարձրանում են և այդ բացատրվում է, ինչպես կտեսնենք հետո, նրանց մեծաքանակ գների բարձրացման հետևանքով:

Այժմ, № 16 տախտակում մենք քննենք գների շարժումը %/0-ներով. № 16 տախտակը բնորոշ է այն տեսակետից, վոր պետական արդյունաբերություն կողմից մի շարք ապրանքների գներ բարձրացվել են՝ իջնելու փոխարեն: Այսպես՝ յեթե 1925 թ. X/1-ին պետական արդյունաբերություն, Հայկոպի և մեր ցանցի ապրանքների գներն ընդունենք 100, ապա 1926 թ. I/X-ին պետա-

կան արդյունաբերություն 9-ը ապրանքից 5-ի գները բարձրացել են, 3-ը մնացել են անփոփոխ և միայն մեկին իջել է: Հայկոպի գները՝ 9-ից 4-ը բարձրացել են, 2-ը մնացել են անփոփոխ և 3-ը իջել են: Ցանցի գները՝ 9-ից 3-ը բարձրացել են, իսկ մնացած 6-ը իջել: Այսպիսով մեր կոոպերատիվները գների իջեցման տեսակետից առաջին տեղն են ընդունում հանդեպ Հայկոպի և մանավանդ սինդիկատների ու տրեստների: Իսկ այն ապրանքները, վորոնց գները բարձրացել են կոոպերատիվներում, հատկապես նրանք են, վոր թանկացած գներով ձեռք են բերված սինդիկատներից և տրեստներից:

Այս յերևույթը արժանի չե հատուկ ուշադրություն, այն տեսակետից, վոր տեղական արդյունաբերություն մեծաքանակ առևտրակա՞ն կազմակերպությունները գների իջեցման քաղաքականությունն ապամաններում իրենց սկզբնական գները բարձրացրել են և զրանով դժվարացրել մանրածախ գների իջեցման գործը կոոպերատիվներում: Այս յեղրակացությունը, վոր մենք հանում ենք մեր թվական տվյալներից, հետևանք է մեր Հայաստանի յուրահատուկ պայմանների, այլ այդ ընդհանուր յերևույթ է, վորի անդրադարձումը տեսնում ենք նաև մեզ մոտ: Իրապես՝ մի շարք սինդիկատներ, ինչպիսին են անկվածային, պրոտոսիլիկատ և ուրիշները, փաստորեն բարձրացրին իրենց ըսկզբնական գները, վորի գեմ սպառողական կոոպերացիայի վորջ սիստեմը բողոքեց և աղմկեց իր ժամանակին:

Ընդհանուր առմամբ այս տվյալները ցույց են տալիս, վոր մեր ցանցում գների իջեցման ուղղությամբ վորոշակի պրոցեսս կատարվում է: Սակայն նա իր հետևանքներով շատ աննշան է և բնավ չի իրականացվել Աշխատանքի և Պաշտպանության խորհրդի հրահանգը գները 10 %/0-ով իջեցնելու մասին:

Այդ է պատճառը, վոր մեր կուսակցությունը և իշխանությունը նորից վերադարձան գների իջեցման խնդրին և այս անգամ մանրածախ գների 10 %/0-ի իջեցման հարցը դրին շատ կատեգորիկ և վճռականորեն: Գների իջեցումն այս անգամ յերկու ուղղությամբ և գնալու: Բացի մանրածախի գներից, պետք է իջնեն նաև պետական արդյունաբերության սկզբնական գները: Մեր կուսակցություն փետրվարյան պլենումի, ինչպես և Աշխատանքի ու Պաշտպանության խորհրդի նոր վորոշումներից հետո՝ գների իջեցման հարցը թևակոխում է ավելի վճռական և իրական շրջան: Հայաստանի սպառողական 1926 թ.

հոկտեմբերի 1-ից մինչև 1927 թվականի հունվար-մարտ ամիսները գների իջեցման գործում նոր նվաճումներ ունի: Անհրաժեշտ է, սակայն, նկատել, վոր գների իջեցման հարցը մեղա-նում՝ մարտի 1-ից հետո, մտնում է վճռական շրջան: Մեր կողմերատիվ ամբողջ հասարակականությունն այժմ շարժման մեջ է: Բոլոր միջոցները ձեռք են առնված, վոր մարտ ամսվա ընթացքում իրականացվեն ներքառօրկոմատի կողմից հրահանգված ապրանքների նոր նորմաները (մանուֆակտուրա, շաքար): Բացի այդ՝ ամենուրեք, բոլոր կողմերատիվների համար առանձին-առանձին՝ տեղերում մշակվելու յին առավելագույն հավելումների և առևտրական ծախսերի նորմաներ: Այդ աշխատանքները հարվածային կերպով կատարելու համար, մորլիզացիայի յին յենթարկված վոչ միայն Հայկոոպի կազմա-հրահանգչական բաժնի բոլոր ուժերը, այլ և պատասխանատու աշխատակիցների ակտիվը՝ մոտ 20 մարդ:

Մենք արդեն այդ կամպանիայի նախնական տվյալներն ունենք Յերևանի, Եջմիածնի և Լոռի-Փամբակի գավառների 24 կողմերատիվների վերաբերմամբ, վորոնք տալիս են շոշափելի հետևանքներ և բնորոշ են մյուս կողմերատիվների համար ևս: (Տես տախտակ № 17, յերես 45).

Այս աղյուսակը ցույց է տալիս, վոր 1927 թ. հունվարի 1-ի գների համեմատությամբ մարտի 23-ին նոր իջեցում է կատարվել $5,9\%$ -ով: Պետք է նկատել, վոր այս իջեցումը չի տալիս կատարված աշխատանքի լրիվ պատկերը: Յեթե մենք մանուֆակտուրան առանձին վերցնենք, այն ժամանակ իջեցումն արտահայտվում է ավելի մեծ չափով՝ $8,4\%$ -ով: Աղյուսակում ցույց տրված մնացած բոլոր ապրանքների մինչև մարտի 23-ը կատարված իջեցումների տվյալներ դեռևս չունենք, իսկ իջեցում կատարված է: Այս բանի հետևանքով, ընդհանուր իջեցման տոկոսը ավելի պակաս է դուրս գալիս, քան իրսպես կատարված է: Բացի այդ, մեծաքանակ առևտրի և տրեստների կողմից կատարված իջեցումները, վոր $5-6\%$ -ի յին հասնում, մասամբ դեռևս ցանցին չեն հասել. նրանք նույնպես ներկայումս վորոշ չափով նվազեցրած կլինեն իջեցման $\%$ -ները: Համանման աշխատանքներ, ինչպիսին կատարվել են ցույց տրված 24 կողմերատիվների նկատմամբ, տարված են և շարունակում ենք կատարել մեր բոլոր կողմերատիվների վերաբերյալ: Այդ աշխատանքների պատկերը դեռևս չունենք, վորովհետև բոլոր նյութերը դեռ մեզ չեն հասել:

Այս մի ամսվա ընթացքում կատարված աշխատանքը շատ մեծ գործ է և այսուհետև՝ ձեռք առնված բոլոր միջոցները լրիվ ու ամբողջությամբ կյանքի մեջ կիրառելու դեպքում — իսկ այդ անպայման կիրականացվի — հնարավորու-

Աղյուսակ № 17

Գների իջեցումը հունվարի 1-ից մինչև 23-ը. մարտի

Ապրանքների անունները	% -ային մասնակցությունը ըբջանություն մեջ	1927 թ. 1/1.		1927 թ. 1/III.		1927 թ. 23/III	
		Գինը	$\frac{\%}{\text{նեք}}$	Գինը	$\frac{\%}{\text{նեք}}$	Գինը	$\frac{\%}{\text{նեք}}$
1) Մանուֆակտուրա	59	82,51	100	80,67	97,7	75,59	91,6
2) Յերկաթեղեն և սկոբյանոյ	0,8	41,55	100	40,35	97,1	—	—
3) Ամանեղեն	1,3	17,9	100	17,5	97,7	—	—
4) Նավթամթերքներ	3,5	12,17	100	12,13	99,7	—	—
5) Կաշվեղեն	2,1	575	100	550	95,6	—	—
6) Լուցկի	0,9	15	100	15	100	—	—
7) Ծխախոտեղեն	2,1	20,5	100	20,4	99,5	—	—
8) Ոճառ լվացքի	1,8	27,8	100	27,4	98,5	—	—
9) Շաքար լաֆ. և պեռոկ	6,0	76,65	100	73,3	95,6	—	—
10) Թեյ	0,8	843	100	816	96,7	—	—
11) Աղ	3,2	4,44	100	4,44	95,9	—	—
12) Գալանտերես	1,4	15,1	100	14,5	96,0	—	—
13) Ռետինե ապրանքներ	0,2	402	100	398	99,0	—	—
14) Հացամթերքներ	6,3	16,5	100	16,5	100	—	—
15) Բրինձ	1,1	60,25	100	60,8	100,9	—	—
16) Կաթնեղեն	0,5	135,7	100	134	98,7	—	—
17) Այլ ապրանքներ	9,0	—	100	—	96,9	—	—
	100	—	100	—	97,7	—	94,1

Թյուն կունենանք մեր կուսակցության և աշխատանքի ու պաշտպանության խորհրդի՝ մանրածախսի գների 10% իջեցմանը վերաբերվող հրահանգն իրականացնել ամենակարճ ժամանակամիջոցում:

VII. ՍՊԱՌԿՈՈՓԵՐԱՅԻԱՅԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սպառկողներացիայի թե նվաճումները և թե նրա պակասությունները սերտորեն կապված ելին այն խնդրի հետ, թե կոոպերացիայի ղեկավար մարմիններում աշխատող կադրեր վորակապես ինչպիսի ուժ է ներկայացնում իրենից: Իրական ղեկավար ուժերի խնդիրը՝ մեր կոոպերացիայի ու շինարարության գործնական կիրառման տեսակետից՝ ունի գերազանց հաշնակություն: Առանց չափազանցության կարելի չէ պնդել, վոր յեթե վորեւե կոոպերատիվի ղեկավարությունն անցնում է վործված և ձեռնահաս աշխատողի ձեռք, նրա նորմալ զարգացումը նախապես կարելի չէ համարել ապահովված: Քանի-քանի կոոպերատիվներ մեր գործունեություն թարմ անցյալի մեջ ֆինանսական կատաստրոֆաներ են ապրել, անտնտեսալարական գործունեության աղաղակող փաստեր ցուցահանել և շեղել մեր կոոպերատիվ քաղաքականությունը ուղիղ ընթացքից, շնորհիվ ապիկար և անտեղյակ ղեկավար ուժերի: Դրա հետ միասին, մենք հար և անտեղյակ ղեկավար ուժերի, վորոնք իրենց ճիշտ ունեցել ենք և ունենք լավագույն ուժեր, վորոնք իրենց ճիշտ և մտածված գործունեությունը, մինչև իսկ ամենադժվարին և մտածված գործունեությունը, մինչև իսկ ամենադժվարին պայմաններում, խոշոր նվաճումներ են կատարել և որինակ դարձել շատ շատերի համար: Այդ և պատճառը, վոր կոոպերատիվ կենտրոնի համար, հաշվետու-վերնորական կամպանիայի ժամանակ, աշխատող ուժերի նպատակահարմար ընտրության խնդիրը դառնում է և կենտրոնական ու միաժամանակ զգվարին հարցերից մեկը:

1926-27 տնտեսական տարվա առաջին յեռամսյակը հաշվետու վերնորական կամպանիայի զրոյակի տակ անցավ: Վարչությունների կազմի ընտրություններին այս անգամ տրվել է չափազանց գործնական բնույթ: Անցած տարիներին վարչությունների կազմը լինում էր բաղմամարդ: Պատահում էր 7-ից մինչև 15 հոգուց բաղկացած վարչության կազմ:

Կյանքն ապացուցեց, վոր այս յերեւոյթը միանգամայն անգործնական է և հաճախ խանգարում է գործի նորմալ ընթացքին: Այդ պատճառով Հայկոպի վարչությունը, հաշվետու վերնորական կամպանիայի նախորդակին, ընդունեց վորոշում, վորով միախառնութ կոոպերատիվների վարչությունների կազմը առաջարկում էր 3 հոգուց վոչ ավել, բաղմախառնութ կոոպերատիվներում՝ 5 հոգի, բացառիկ դեպքերում 7 հոգի:

Այս կամպանիայի ընթացքում հատուկ ուշադրություն է դարձված վերստուգիչ մարմինների ընտրությունների վրա: Պետք է արձանագրել, վոր մեր կոոպերացիայի ակտիվացող մասսան իր միջից արդեն ստեղծում է ակտիվ և գործունյա վերըստուգիչ մարմիններ: Մեր ցանցում արդեն գոյություն ունեն այնպիսի վերստուգիչ մարմիններ — և զրանց թիվը քիչ չի, — վոր ինքնուրույն գործունեություն են յերևան հանում: Առանց կենտրոնի կամ հրահանգչի ոժանդակության վերստուգումներ են կատարում, հայտնաբերելով վարչությունների գործունեության շատ ու շատ սխալներ, պակասավոր կողմեր: Այժմ մեր վերըստուգիչ մարմիններից շատերը ձեռնարկ, անգործունյա մարմիններ չեն, ինչպես ելին առաջ: Սակայն վերստուգիչ մարմինների ակտիվացումը նոր է սկսված և այդ մեր գործունեության ամենամիսթարական կողմերից մեկն է. մենք դեռ այս ուղղությամբ շատ ու շատ անելիքներ ունենք: Այժմ տեսնենք ինչ պատկեր է ներկայացնում ղեկավար մարմինների կազմը 1926-27 տնտ. տարում:

Ազգային կազմը, սեռը յեվ յեկվորեների թիվը

Աղյուսակ № 18

Ղեկավար մարմինները	Ան- գամ. քա- նակը	Տը- ղա- մարդ	Կին	Հայ	Թուրք	Ռուս	Այլք	Տե- ղացի- ներ	Յեկ- վոր- ներ
Վարչություն	357	96,0%	4,0%	82,2%	7,4%	2,8%	0,6%	69,0%	31,0%
Վերստուգիչ մարմին	206	97,6%	2,4%	88,2%	6,3%	4,0%	1,5%	64,0%	36,0%

Այս աղյուսակից յերևում է, վոր կնոջ մասնակցությունը վարչությունների մեջ արտահայտվում է 4,0% -ով: Նախորդ տարիների հետ համեմատած՝ այս տեսակետից մենք վորոշ նվա-

հումքեր ունենք, սակայն յեղած դրութիւնը դարձյալ պետք է համարել միանգամայն անբավարար: Կնոջ ակտիվ մասնակցութիւնը կոոպերատիվի գործերի մեջ ապահովելու համար, քիչ բան է արված. անհրաժեշտ է այդ ուղղութիւնով ուժեղացնել մեր աշխատանքները: Թուրքերի մասնակցութիւնը վարչութիւնների մեջ 7,4 տոկոս է և վերստուգիչ մարմիններում 6,3%: Այդ ուղղութիւնով կարելի չէ համարել բավարար: Հայաստանի բոլոր գավառներում թուրքերի տոկոսային մասնակցութիւնը միատեսակ չի: Որինակ՝ Յերեւանի գավառում, ուր թուրք ազգաբնակչութիւն շատ կա, նրանց մասնակցութիւնը արտահայտվում է վարչութիւններում 19,5%-ով և վերստուգիչ մարմիններում 22,3%-ով, վոր պետք է համարել միանգամայն բավարար: Մոսկի ապագայում թուրքերի մասնակցութիւնն էլ ավելի կուժեղանա, վորովհետեւ մեր այս տարվա ծրագրով նախատեսված է մի քանի նոր կոոպերատիվներ ունենալ հատկապես թուրքական շրջաններում:

Այնուհետեւ № 18 աղյուսակում հետաքրքիր պատկեր է ներկայացնում յեկվորների, այսինքն վոչ տեղացիների տոկոսային մասնակցութիւնը ղեկավար մարմինների մեջ: Յեկվորների, այսինքն վոչ տեղացիների մասնակցութիւնը վարչութիւններում արտահայտվում է 31% -ով, իսկ վերահսկիչ մարմիններում՝ 36% -ով:

Հակառակ մեր բոլոր ցանկութիւնների, դժբախտաբար, հնարավոր չի լինում կոոպերատիվների ղեկավարութիւնն ամբողջութեամբ հանձնել տեղական ուժերին, վորը կլինեւր ամենանպատակահարմարը և ցանկալին: Տեղերում, մասնավոր խոշոր կոոպերատիվների ղեկավարութեան համար, պահանջվում են բավականին փորձված և պատրաստված կոոպերատոր ուժեր: Առանց համապատասխան ուժերի հաճախ գործը յենթակա յե լինում վտանգի: Այդ է պատճառը և դրանով էլ բացատրվում է, վոր ղեկավար մարմինների մեջ բավականին զգալի տոկոսը կազմում են յեկվորները: Չնայած գավառներում յեղած համապատասխան ուժերի սակավ քանակին, այնուամենայնիւ, տեղական ուժերի մասնակցութիւնը ղեկավար մարմինների մեջ արտահայտվում է 64%-ից մինչև 69%-ով, վոր պետք է համարել բավարար վիճակ: Պարզ է, վոր ապագայում մենք պետք է այնպիսի ընթացք բռնենք, վոր տեղական ուժերի մասնակցութիւնն էլ ավելի աճի:

Այս աղյուսակից յերևում է, վոր ամբողջ Հայաստանում վարչութիւնների մեջ կոմունիստների մասնակցութիւնը հասնում է 58,5%-ի և վերստուգիչ մարմիններում 45%-ի: Այս դրութիւնը պետք է համարել բավարար, վորովհետեւ կոմունիստներին հավասար չափով մեր կոոպերատիվ շինարարութեան մասնակից է և անկուսակցական կոոպերատոր ակտիվը: Այս տեսակետից վորոշ գավառներում դրութիւնն այնքան էլ բավարար չի: Յերեւանի և Նոր-Բայազեդի գավառներում անկուսակցականների մասնակցութիւնը վարչութիւնների մեջ հասնում է 39,3%-ի: Այս դրութիւնը պետք է համարել անբավարար: Մենք մեր հետագա աշխատանքների ընթացքում պետք է ուժեղացնենք անկուսակցական ընկերների ակտիվ մասնակցութիւնը մեր կոոպերատիվ շինարարութեան գործին: Մի հանգամանք,

Կուսակցական կազմը

Աղյուսակ № 19

Ղեկավար մարմինները	Յեկվորների քանակը	Կուսակց. պատկ.			Կուսակց. քանակը	Կուսակց. ստաժը			
		Կուս ան- դամն	Ան- կու- սակց.	Կոմ- սո- մոլ		Մինչև 1905 թ.	Մինչև 1917 թ.	1917 թ. 1920 թ.	1921 ից հետ-
Վարչութիւն	357	58,5%	40,4%	1,1%	209	0,5%	1,0 /	31,1%	67,4%
Վերստուգիչ մարմին	206	45,0%	50,0%	5,0%	91	—	—	30,7%	69,3%

վոր աչքի յե ընկնում, պետք է այստեղ մատնանշել: Դա մեր կոմսոմոլի թույլ մասնակցութիւնն է կոոպերատիվ վարչական մարմինների մեջ: Վարչութիւններում նրա մասնակցութիւնը 1,1%-է, իսկ վերստուգիչ մարմիններում 5,0%: Անտաթիւնը 1,1%-է, իսկ վերստուգիչ մասնակցութիւնը կոոպերատիվ բաժնույս, մեր կոմյերիտների մասնակցութիւնը կոոպերատիվ գործերի մեջ շատ թույլ պետք է համարել: Ըստ յերեւոյթին մեր կոմյերիտականներն իրենց գործնական, տնտեսավարական և կոոպերատիվ աշխատանքներում գլուղացիական մասսաների ուղղութիւնը և վստահութիւնը ղեկուս չեն զրավել: Անհրաժեշտ է, վոր մեր մատաղ սերնդի դաստիարակութեանը տրվի գործնական բնույթ՝ (մասնագիտական, տնտեսական և կոոպերատիվ) թեքումով:

Հեկավար մարմինների սոցիալական զբաղմունքը վերաբերում է համար նախապես լրացված են անկետաներ, ուր ցույց է տրված մանրամասնորեն, թե ի՞նչ միջոցներ ունի գյուղացին, վորի հիման վրա յեւ վերաբերում են նրանց սոցիալական վիճակին պատկանելը: սակից յերեւում է, վոր վարչութիւնների և վերստուգիչ մարմինների կազմի 40-45 տոկոսը կազմում են ծառայողներ: Ծառայողները գլխավորապես վերաբերվում են քաղաքներին և այն կենտրոնական գյուղերին, ուր բավականաչափ ծառայողներ կան: Գյուղական կոոպերատիվների՝ չհաշված քաղաքները, ղեկավար մարմիններում գյուղացիք բացարձակ մեծամասնութիւն են կազմում: Ինչ վերաբերվում է սոցիալական կազմին, յեղած զբաղմունքը պետք է համարել բավարար: Ունեւորների տոկոսը

Սոցիալական կազմը

Աղյուսակ № 20

Հեկավար մարմինները	Ընդհանուր թիւը	Սոցիալ. կազմը			Գյուղացիների տնտ. զբաղմ.			
		Ծառայողներ	Գյուղացիներ	Բանավորներ	Ընդհանուր	Քրթններ	Միջակներ	Ունեւորներ
Վարչութիւն	357	40,0%	57,5%	2,5%	205	37,6%	59,5%	2,9%
Վերստուգիչ մարմին	206	45,0%	51,0%	4,0%	104	34,6%	63,4%	2,0%

կազմում է 2-ից մինչև 2,9%: Յեղած ունեւորների 90% -ը վերաբերում է Լոռի-Փամբակի գավառին և դա շատ բնորոշ է: Լոռի-Փամբակի գավառում մեր ցանցը գլխավորապես միախառնութ կոոպերատիվներից է կազմված: Միախառնութ կոոպերատիվները գյուղի մասսային շատ մոտ են գտնվում և այդ պատճառով նրանք յենթակա յեն գյուղում սոցիալական շերտերի մեջ տեղի ունեցող դասակարգային պայքարի ազդեցութիւնը: Անհրաժեշտ է նկատել, վոր մեր տվյալներում ունեւորների տոկոսն ավելի քիչ է ներկայացված, քան իրական գոյութիւն ունի: Այդ տեսակետից մեր թվերը կարիք են զգուշացնել ուսումնասիրութիւն:

Վարչութիւնների և վերստուգիչ մարմինների կրթական զբաղմունքն ընդհանուր առմամբ պետք է համարել բավարար: Անգործակալների թիւը կազմում է 3%: Իհարկէ, սա անցանկալի յերեւութներից մեկն է, սակայն մեր պայմաններում դա նախադեպ է յիս: Մեր յերկրի ազգաբնակչութիւնը անգործակալների զգալի տոկոս ունի և այդ փաստի արտահայտութիւնը մենք տեսնում ենք կոոպերացիայի կյանքում:

Կոոպատմի տեսակետից սպառնալից կոոպերացիայի ղեկավար կազմը պետք է համարել բավարար վիճակում: Ամբողջ կազմի

Կրթութիւնը յեւ կոոպերատիվ ստաժը

Աղյուսակ № 21

Հեկավար մարմիններ	Ան- դամ- ների թիւը	Կրթութիւնը				Կոոպատմի				
		Ան- գրա- վոր	Տար- րա- կան	Միջ- նա- կարգ	Բարձ- րա- դաս	Ան- ըս տաժ	1-ից տարի	3-ից տարի	5-ից տարի	5-ից բարձր
Վարչութիւն	357	3,3%	74,6%	21,8%	0,3%	26,6%	50,0%	18,8%	4,6%	0%
Վերստուգիչ մարմիններ	206	3,0%	62,9%	36,1%	1,0%	20,0%	55,3%	20,2%	4,5%	0%

20-ից-26 տոկոսը կազմում են կոոպերատիվ փորձառութիւնից զուրկ անձինք. մնացած բացարձակ մեծամասնութիւնը ունի առնվազն մեկ տարվա և ավելի կոոպերատիվ փորձառութիւն: 3 տարուց բարձր փորձառութիւն ունեցող ընկերների թիւը նույնպես կազմում է բավականին զգալի տոկոս՝ 20-ից մինչև 25%, վորը անպայման շոշափելի նվաճում է մեզ համար: Այդ տեսակետից սպառնալից կոոպերացիայի անմիջական ղեկավարութիւն տեսնում ենք բացարձակ մեծամասնութիւնը, գտնվում է մի քանի տարվա կոոպերատիվ ստաժ ունեցող ընկերների ձեռքում:

VIII. ՉԱՐԱՇԱՀՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՊԱՌԿՈՊԵՐԱՅԻԱՅՈՒՄ

Սպառողական կոոպերացիայի համար ամենամեծ սոցիալական չարիքը, նրա գործունեության ամենաստվերոտ կողմը հանդիսանում են հաճախ կրկնվող զեղծարարությունները: Մեր ունեցած տվյալների համաձայն 1925—26 տնտ. տարվա ընթացքում զեղծարարության դեպքեր են տեղի ունեցել 28 կոոպերատիվում՝ վորը կազմում է բոլոր կոոպերատիվների 35⁰/₀-ը. զեղծարարության դեպքերը թվով 54-են: Կորուստի գումարը կազմում է 33,758 ռ. 93 կ.: 1926—27 տնտ. տարվա մեջ նորից 4 կոոպերատիվում տեղի յեն ունեցել 6 չարաշահության դեպքեր, 10,236 ռ. գումարով: Բոլոր զեղծարարությունների 90⁰/₀-ը կատարվում է պատասխանատու գործակատարների կողմից:

Ինչպես տեսնում ենք, չարիքը շատ մեծ է. տարի ու կեսվա ընթացքում մեր սպառկոոպերացիան կորուստ է ունեցել **48,994 ռ. 93 կ.**:

Բոլոր զեղծարարները դատի յեն տրված և մեղավորները մեր դատարանների կողմից համապատասխան պատժի յեն յենթարկված, սակայն կորուստի գումարը մեր կոոպերատիվների համար 80⁰/₀-ի չափով մնացել է անվերադարձ: Պետք է նկատել, վոր զեղծարարների հանցանքի մեծության համապատասխան պատիժը յերբեմն խիստ չի և անցնում է անհամեմատ մեղմ: Ընդհանուր առմամբ սպառնացող մթնոլորտն ավելի պիտի խստացնել նման հանցանքներ կատարողների համար:

Մեր ամբողջ խորհրդային, կուսակցական, կոոպերատիվ հասարակայնությունը պետք է ուժեղացնել անողոք պայքարն ընդեմ կոոպերացիայում բուն դրած այդ սոսկալի չարիքի: Առանձնապես խորհրդային արդարագատությունը ավելի քան անողոք է լինելու դեպի կոոպերատիվ չարաշահությունները:

Մյուս կողմից այդ հանցանքները հետևանք են մեր ընդհանուր անկուլտուրականության: Գիտակից կուլտուրական գործակատարներ ունենալը մեր կոոպերատիվների համար կենսական

անհրաժեշտություն է: Կոոպերատիվի գործակատարի պաշտոնը, կարելի յե ասել, նույնքան պատասխանատու յե, վորչափ նախագահինը: Այդ պատճառով, Հայկոոպը և բոլոր կոոպերատիվները վոչ մի միջոց չպիտի խնայեն, ունենալու համար գործակատարների վերապատրաստման և պատրաստման հատուկ դասընթացներ: Մենք պետք է կուլտուրական գործակատարների կազմ ստեղծենք մեր ցոնցի համար: Վերջին հաշվով այդ միջոցով միայն հնարավոր կլինի կոոպերացիայի այդ մեծ չարիքը, զեղծարարությունն ու չարաշահությունը վերացնել:

IX. ԿՈՈՎԵՐԱՑԻԱՅԻ ԿՈՒՆՈՒՐ-ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ-ՆԵՐԸ

Մեր կոոպերացիայի տնտեսական զարգացման, նրա բնդարձակման և ծավալման զուգահեռ՝ չի զարգանում, դժբախտաբար, մեր կոոպերատիվ ուժերի, ղեկավարող կադրի կուլտուրական մակարդակը: Մեր տնտեսական վերելքի թափն այնքան ուժգին է, վոր մեր ուժերի կուլտուրական զարգացումը վորոշակի կերպով հետ է մնում: Մեր այս կամ այն կոոպերատիվի նախագահը, յեթե մի յերկու տարի առաջ իր գործերը ղեկավարում եր առանց վորեւ գովարության, այժմ նրա կոոպերատիվի գործերն այնքան են մեծացել ու բարդացել, վոր նա արդեն ղովարանում է տիրապետել իր գործին:

Այնուհետև մեր կոոպերացված բազմահազար մասսաների ակտիվացման, նրանց կուլտուրական դաստիարակման որ քստ որե աճեցող պահանջը սպառնկոպերացիայի համար ստեղծում են կուլտուր-կրթական աշխատանքների հսկայական ասպարեզ, անսահման անելիքներ:

Սակայն այդ տեսակետից սպառնկոպերացիայի կուլտուր-կրթական աշխատանքները մինչև այժմ անհրաժեշտ ծավալ չեն ստանում և, պետք է խոստովանվել, այդ մեր աշխատանքների ամենաստվերոտ կողմերից մեկն է:

Անցյալ տարվանից մեր ցանցն իր տարեկան զուտ ոգուտներին $10\frac{0}{100}$ -ը ամենուրեք հատկացրել է կուլտ-կրթական ֆոնդին: 1926-1927 տնտ. տարվա առաջին կվարտալում, հաշվետու-վերընտրական կամպանիայի ժամանակ, այդ 10-տոկոս հատկացումները մեր բոլոր կոոպերատիվները լրիվ կատարել են: Այդ ֆոնդը կազմում է մոտավորապես 20—24 հազար ուրբլի: Հայկոոպի կազմա-հրահանգչական բաժնի կողմից կուլտ-կրթական աշխատանքների ծրագիր ուղարկված է և պետք է նկատել, վոր տեղերում այդ աշխատանքները սկսված են: Այս տարի մեծ ու-

շարունակում է դարձվում կոոպերացիայի աշխատակիցների վերապատրաստման գործին: Նախատեսված ծրագրով մենք բոլոր գավառներում ունենալու յենք կարճատև դասընթաց-համագումարներ և վերապատրաստման հատուկ դասընթացներ՝ հաշվետարների, գործակատարների, նախագահների և վեստուզիչ հանձնաժողովների համար: Լոուի-Փամբակում և Յերեանի գավառում արդեն այդպիսի դասընթացներ անց ենք կացրել. պետք է լինեն նաև մյուս գավառներում: Հայկոոպը 1925 թվին կազմակերպել եր յերեք ամսվա դասընթացներ, վոր տվեցին շատ զբաղան հետևանքներ: Այդ դասընթացները վերջացրած ուսանողների մեծ մասը սպառողական և գյուղատնտեսական կոոպերացիայում այժմ վարում է պատասխանատու աշխատանքներ: Դրանից 7 հոգի կոոպերատիվի նախագահներ են, մեկ հոգի Հայգուղկոոպի հրահանգչի է, 4 հոգի հաշվապահ և հաշվատարներ են և 10 հոգի ել գործակատարներ և քչլ պաշտոնների մեջ են: Նման կարճատև դասընթացների այդպիսի հետևանքները պետք է համարել միանգամայն բավարար: Նույնպիսի դասընթացներ ունենալու մեծ պահանջ կա: Անհրաժեշտ է մտածել և միջոցներ վորոնել, այդպիսի դասընթացներ կազմակերպելու համար:

Բացի այդ, Հայկոոպը 3 ուսանող ունի Լենինգրադի և Մոսկվայի բարձրագույն կոոպերատիվ կուրսերում, ու թ ուսանող ել կա Անդրկովկասյան կոմունիստական համալսարանին կից կոոպ. տեխնիկումում: Կոոպերատիվ խորհրդին կից այս տարվանից հրատարակվելու յ կոոպերատիվ ամսաթերթ, վորի կարիքը մեր ցանցը վաղուց է ինչ զգում ե: Պետք է նկատել, վոր կոոպերատիվ կենդրոնների կուլտ-կրթական աշխատանքները կենտրոնացված են կոոպերատիվ խորհրդի ձեռքում, վոր, ի դեպ, մինչև այժմ շատ քիչ բան է արել: Յեթե այդպես յերկար շարունակվի, կոոպերատիվ կենդրոնների կուլտ-կրթական աշխատանքները շատ կսուժեն: Անհրաժեշտ է բոլոր միջոցները ձեռք տունել այդ աշխատանքները սկսելու և ուժեղացնելու համար: Կոոպերատիվ դաստիարակության որստորե աճող պահանջը նկատի ունենալով՝ Հայաստանի Լուսժողկոմատն այս տարի բաց արեց կոոպերատիվ տեխնիկում: Այս տեխնիկումը կոոպերատորների պատրաստված կադր ունենալու տեսակետից մեծ նշանակութուն ունի, վորի պաշտպանման և կանոնավորման համար մեր կոոպերատիվ կենտրոնները չպիտի խնայեն իրենց անհրաժեշտ թե նյութական և

թե կազմակերպչական ոժանդակութիւնը: Բացի այդ, Լուսժող-
կոմատը իր II-րդ աստիճանի Արժիւն և Կենտրոնական դպրոց-
ներին տվել և տնտեսական-կոոպերատիվ թեքում, վորը նույն-
պես շատ կնպաստի մեր կոոպերատիվ դաստիարակութեան դոր-
ծին:

X. ՀԱՅԿՈՈՊԻ ԿԱԶՄԱ—ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՇԽԱ- ՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Կազմա-հրահանգչական աշխատանքների բովանդակութիւն-
ը և նրա վարած ու վարելիք քաղաքականութիւնը մենք տե-
սանք՝ սպառնկոպերացիայի մինչև այժմ նշած աշխատանքների
հիմնական մոմենտները շոշափելիս: Սակայն, անհրաժեշտ է այս-
տեղ կանգ առնել կազմա-հրահանգչական աշխատանքների այն
մեթոդների վրա, վոր կիրառվում են մեր աշխատանքների ըն-
թացքում:

Խորհրդային վողջ տնտեսութիւնն այժմ ապրում է բե-
կոնստրուկտիվ շրջան: Մեր տնտեսութեան կառուցման այդ աշ-
խատանքների մեջ չափազանց մեծ տեղ են գրավում թե կոոպե-
րացիայի և թե այլ առևտրական կազմակերպութիւնների ապ-
արատի և մյուս աշխատանքների ռացիոնալիզացիայի խնդրո-
ւները: Կոոպերա ցիան այնքան է մեծացել և նրա աշխատանք-
ներն այնքան են բարդացել, վոր ղեկավարման հին ձևերն արդեն
դարձել են անկիրառելի և աննպատակահարմար: Կոոպերացիայի
մասսայական բնույթը և նրա ղեկավարող մարմինների՝ վարչու-
թիւնների, վերստուգիչ մարմինների ու խանութային հանձնա-
ժողովների նկատելի ակտիվացման փաստը եւ ավելի լուրջ կեր-
պով են դնում մեր առաջ աշխատանքի հին մեթոդների վերա-
նայման: Նրանց վերագնահատման անհրաժեշտութեան հարցը:

Մեր աշխատանքների մեջ նոր մեթոդը և հիմնականը կազ-
մում է հետեյալը՝ առավելագույն չափով ապահովել ճեղքում
կոոպերատիվ բնորոշի մարմինների սեփական գործի ինքնու-
րույն յեւ աճկաւանդ ղեկավարութեան հեռավորութիւնները:
Ճեղքի նախաձեռնութեան ամեն մի արհեստական հովանավո-
րում սրանից հետո բացասական մտքով կանգնողառնան մեր
աշխատանքների վրա: Այդ նոր պայմանների հետեւանքով կոո-
պերատիվ հրահանգչի աշխատանքները ձեւափոխվում և դառնում

են ավելի լուրջ և պատասխանատու: Յեթե մեր հրահանգիչը առաջ սոսկ տեխնիկ եր և տեղերում հարկադրված եր լինում կատարել կոոպերատիվի նախագահի, հաշվապահի և վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքները, փոխարինելով նրանց, կորցնելով դրա վրա շատ յերկար ժամանակ, այժմ մեր հրահանգիչը հաճախում է սովորեցնող, դեկավարող չեվ պլանային ու ռացիոնալիզացնողական աշխատանք կատարող: Առաջ մեր հրահանգիչը վերստուգում եր կոոպերատիվը, այժմ նա կյանքի յե կոսնչում վերստուգիչ մարմինն և այդ աշխատանքը կատարում է նրանց միջոցով: Այնուհետև մեր հրահանգչական ապագաբար ածիսներ եր կորցնում այս կամ այն կոոպերատիվի ամբողջ գործունեությունը բովանդակող քննական կամ հետադոտական աշխատանքների վրա, կազմելով 50—60 յերեսանոց ակադեմիկ արձանագրություններ, այժմ նա առաջին հերթին ակադեմիկ առնում կոոպերատիվ ցանցի հիվանդոտ կոպմերի անմիջական բուժման անհրաժեշտության հարցը: Առաջագրում է հարվածային, այժմեական ցայասակային խնդիրներ չեվ աշխատում է լուծել այն հարվածային կարգով:

Կոոպերացիայի առևտրական-տնտեսական գործունեություն ծավալման գուղըթաց անհրաժեշտ է հրահանգչական աշխատանքին տալ տնտեսավարական թեքում: Հրահանգիչը, վորակելի լավ և ձիշտ ղեկավարի կոոպերատիվի գործերը, նա պետք է հասկանա առևտրական գործը, խորանա նրա մեջ և լինի տնտեսավար:

Կազմակերպչական աշխատանքների կարևոր և հիմնական մեմենտներից մեկն ել ցանցի պլանային աշխատանքների խնդիրըն և: Մենք այժմ մեր տնտեսություն այնպիսի մի շրջանն ենք ապրում, յերը անհնարին և նպատակահարմար աշխատանք տանել առանց նախապես նախատեսնված պլանի: Մեր ցանցի համար նախատեսնված է պարզ և մատչելի պլանի ձև, վորը և կիրառվում է և մեր հետագա աշխատանքների ընթացքում ավելի պետք է ընդարձակվի:

Հայկոպի կազմա-հրահանգչական աշխատանքների մեթոդների ռացիոնալիզացիայի տեսակետից չափազանց կարևոր նշանակություն ունեցավ 1927 թ. հունվար ամսին տեղի ունեցած հրահանգչական խորհրդակցությունը: Առանց չափազանցություն կարելի յե ասել, վոր այդ խորհրդակցությունը ժամանակակից


պահանջները բավարարելու տեսակետից, իր ընդունած վորոշումներով թեվակոխեց մի նոր շրջան:

Թված բոլոր աշխատանքը, բնական է, շատ մեծ պատասխանատվություն են դնում կազմա-հրահանգչական բաժնի աշխատանքների վրա և նրանց վորակի ու պատասխանատվության հարցը դարձնում ամենահարվածային հարցերից մեկը: Բոլոր միջոցները պետք է ձեռք առնել, վոր մեր հրահանգիչը վերապատրաստվի, պատրաստվի և խորանա բոլոր այն խնդիրների մեջ, վոր նրանից պահանջվում է մեր որ ըստ որի աճող կոոպերացիան: Ըստ ամենայնի հրահանգիչը դառնում է կենտրոնական ֆիգուրա մեր կոոպերատիվ շինարարություն մեջ: Հարկավ անհրաժեշտ է, վոր համապատասխան ուղղորդություն և հոգատար վերաբերմունք լինի դեպի այդ կարևոր կոոպերատոր աշխատողը:

Մեր առաջ դրած խնդիրներն այնքան անձայրածիր են ու բազմաբովանդակ, վոր նրանց լիակատար իրագործման համար մեզնից կը պահանջեն յերկար ու ձիգ տարիներ և աշխատանքի կամք ու վճռականություն:

Այդ խնդիրների լուրջ պատասխանատվության գիտակցություն մե, վոր մենք նոր ուժերով պետք է դիմենք նոր ու նոր նվաճումներին:

Հայաստանի Սպառողական Կոոպերատիվների միության
«Հայկոոպի» կառուցվածքը



ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

*
* *

Հավելվածում չորս աղյուսակները ցույց են տալիս 1926—27 տնտեսական տարվա առաջին կվարտալում մեր կատարված աշխատանքների հետևանքները:

Աղյուսակ № 1-ը ցույց է տալիս ցանցի, անդամների թվի և փայադրամագլխի աճման պատկերը: Ցանցը 81-կոոպերատիվից դարձել է հունվարի 1-ին 78 կոոպերատիվ, 3 կոոպերատիվ լուծարքի յե յենթարկվել, և այդ տեղի է ունեցել հատկապես ի հաշիվ Լոռի-Փամբակի գավառի, վորտեղ գերակշռում են միախանութ ընկերությունները, Լուծարքի յեն յենթարկվել միախանութ ամենահիվանդոտ կոոպերատիվները:

Անդամների թիվը աճել է 3 ամսվա ընթացքում 6853-հոգով, վորի տոկոսային աճումը կազմում է 10,4 ինչ վերաբերում է փայադրամագլխին, այստեղ պետք է ասել, վոր աճումը ավելի մեծ տոկոսով է արտահայտվում—21,1%⁰, կամ 49.503 ռուբլի: Այսպիսով ամբողջ Հայաստանում միջին փայավճարը 3 ռ. 58 կոպեկից բարձրացել է 3 ռ. 92 կոպ., վորը պետք է համարել շոշափելի աշխատանք:

Աղյուսակ № 2-ից յերևում է, վոր մեր ցանցին ապրանքներ մատակարարելու գործում Հայկոոպի դերը բավականին զգալի կերպով բարձրացել է: 1926 թ. հոկտեմբերի 1-ին յեղել է ամբողջ ցանցի նկատմամբ 32%⁰, իսկ 1927 թ. հունվարի 1-ին բարձրացել է 41,3%⁰-ի: Բայց յեթե բանկոոպները դուրս գցենք, վորոնց գնումները Հայկոոպից աննշան տոկոս են կազմում՝ 9,3%⁰, ապա գյուղական ցանցի նկատմամբ կատարվի 63,3%⁰, վոր պետք է շատ մեծ հաջողություն համարել: Այդ նշանակում է, վոր գյուղական ցանցը տնտեսապես շատ ուժեղ կերպով է կապված մեր միության հետ: Այնուհետև կապի ուժեղություն տեսակետից յերկրորդ տեղը բռնում են գավառական կենտրոնների կոոպերատիվները՝ 52,6%⁰:

Աղյուսակ № 3-ից յերևում է, վոր մեր ցանցի շրջանառությունը աճել է 20,2%⁰-ով: Մենք մեր ստուգիչ թվերով 1926—27 տնտ. տարվա համար շրջանառության աճեցում նախատեսել էյինք 29 տոկոս, այս նշանակում է, վոր մեր նախատեսած աճեցումը լրիվ կերպով առաջին կվարտալում չենք կարողացել իրականացնել: Այս աղյուսակի տվյալների ամենաբնորոշ կողմն այն է, վոր առաջին կվարտալում Յերևանի գավառը շրջանառության աճեցման տեսակետից ամենահետին տեղն է բռնում և աճել է միայն 5,7%⁰-ով, իսկ Յերևան քաղաքը 7,7%⁰-ով: Սա բացատրվում է նրանով, վոր մեր յերկրի ամենահարուստ գավառը այս տարի տնտեսապես լավ վիճակի մեջ չի գտնվում: Հակառակ Յերևանի գավառի՝ այս տարվա առաջին կվարտալում Լենինականի և Զանգեզուրի աղքատ գավառների կողպերատիվների շրջանառությունը աճել է 57,0%⁰-ից ավել: Այս ցույց է տալիս, վոր այս տարի այդ գավառների կոոպերատիվները գյուղացի սպառողներին ապրանքներ մատակարարելու տեսակետից ավելի լավ են աշխատել և ավելի յեն ուժեղացել, քան նախորդ տարիներին:

Աղյուսակ № 4-ի հոգվածներին յեթե առանձին-առանձին հետևելու լինենք և վերլուծենք ու համեմատենք 1926 հոկտեմբերի 1-ի մեր ցանցի միացյալ բալանսի տվյալները 1927 թ. հունվարի 1-ի թվերի հետ, կստանանք հետևյալ պատկերը՝ բալանսի մեջ անշարժ միջոցները 10,9%⁰-ից իջնում է 9,6%⁰-ի, վորը պետք է համարել առողջ յերևույթ:

Այնուհետև բալանսի մեջ շրջանառու միջոցների դրությունը նույնպես առողջ տեսլանքներ է ցույց տալիս՝ 89,1%⁰-ից նա բարձրանում է 90,4%⁰-ի:

Փայադրամագլուխը բալանսի մեջ իր տեսակարար կշիռը պահպանում է. շատ աննշան չափով է նվազել: Հիմնական դրամագլուխն աճել է—յեղել 15,4%⁰, այժմ նա դարձել է 19,1%⁰: Ինչ վերաբերում է սեփական և ոտար միջոցների փոխհարաբերությանը, պետք է նկատել, վոր սեփական միջոցները բալանսի մեջ նվազել են. 1926 թ. հոկտեմբեր 1-ին յեղել է 24,6%⁰, իսկ այժմ նա դարձել է 23,4%⁰, իսկ ոտար միջոցները 64,5%⁰-ից բարձրացել է 6,7%⁰-ի:

Սպառողական ցանցի, անդամների թվի և փայտադրամագլխի պատկերը
առ 1-ն հոկտեմբերի 1926 թվի և առ 1-ն հունվարի 1927 թվի:

ԳԱՎԱՌՆԵՐ ՅԵՎ ԲԱՆԿՈՐՈՐՆԵՐ	Բնակչութ. թիվը		Խանութների թիվը		Անդամների թիվը		Փայտադրամագլուխը		Մեկ անդամի միջին փայտադրամը	
	1 հոկտ. 1926	1 հունվ. 1927	1 հոկտ. 1926	1 հունվ. 1927	1 հոկտ. 1926	1 հունվ. 1927	1 հոկտ. 1926	1 հունվ. 1927	1 հոկտ. 1926	1 հունվ. 1927
	1 հոկտ. 1926	1 հունվ. 1927	1 հոկտ. 1926	1 հունվ. 1927	1 հոկտ. 1926	1 հունվ. 1927	1 հոկտ. 1926	1 հունվ. 1927	1 հոկտ. 1926	1 հունվ. 1927
1 Դիլիջանի	10	10	40	41	7.662	8.457	24.220	29.977	3-16	3-54
2 Լոռի-Փամբակի	24	21	43	38	7.806	8.698	31.449	36.719	4-03	4-22
3 Լենինականի	9	9	31	32	4.548	5.289	15.108	18.302	3-32	3-46
4 Եջմիածնի	12	12	43	44	10.140	11.024	33.247	38.468	3-28	3-49
5 Յերևանի	13	13	51	55	11.823	12.633	39.136	46.178	3-31	3-66
6 Նոր-Բայազետի	4	4	21	21	3.981	4.776	13.230	17.717	3-32	3-71
7 Դարավազյազի	3	3	12	12	2.366	2.576	8.998	10.465	3-80	4-06
8 Զանգեզուրի	3	3	29	36	6.031	6.783	23.042	26.161	3-82	3-86
9 Մեղրու	1	1	6	6	771	939	3.706	4.931	4-81	5-25
10 Յերև. բանկոտայ	1	1	19	18	8.003	8.747	35.067	47.528	4-38	5-43
11 Լենինակ. , ,	1	1	14	13	2.619	2.681	8.063	8.413	3-08	3-14
Վոյշ ցանցը	81	78	309	316	65.750	72.603	235.266	284.859	3-58	3-92
1 Բանկոտայներ	2	2	33	31	10.622	11.428	43.130	55.941	4-06	4-89
2 Գործարան. կոտայ. , ,	3	3	18	17	3.852	4.060	16.551	17.890	4-30	4-41
3 Գավառ. կենտ. , ,	7	7	57	58	9.127	10.352	34.397	41.232	3-77	3-98
4 Գյուղական. , ,	69	66	201	210	42.149	46.763	141.188	169.796	3-35	3-63

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԳՆՈՒՄՆԵՐԸ

1926—1927 թվի առաջին յեռամսյակում և Հայկոտայի դերը ներառում

Սղյուսակ № 2

ԳԱՎԱՌՆԵՐ ՅԵՎ ԲԱՆԿՈՐՈՐՆԵՐ	Գնված և ընդամենը	Դրանից գնված և Հայկոտ- այից	Վոր 0-ն և գնված Հայկոտայից
1 Դիլիջանի	241.979	109.163	45,1
2 Լոռի-Փամբակի	590.912	310.774	52,6
3 Լենինականի	248.484	167.900	67,5
4 Եջմիածնի	481.632	328.605	68,2
5 Յերևանի	438.502	303.648	69,2
6 Նոր-Բայազետի	218.581	134.511	61,5
7 Դարավազյազի	93.684	64.214	68,5
8 Զանգեզուրի	221.108	84.502	38,2
9 Մեղրու	30.042	21.548	71,7
10 Յերևանի բանկոտայ	969.665	65.343	6,7
11 Լենինականի , ,	477.806	69.423	14,5
Վոյշ ցանցը	4.012.395	1.659.631	41,3
2 Բանկոտայներ	1.447.471	134.766	9,3
3 Գործարանային կոտայեր.	175.540	74.761	42,6
7 Գավառակ. կենտ. , ,	587.362	308.829	52,6
66 Գյուղական , ,	1.802.022	1.141.275	63,3

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՑԱՆՑԻ ՎԱՃԱՌՔԸ

1925—26 թ. առաջին յեռամսյակում և 1926—27 թ. առաջին յեռամսյակում:

Աղյուսակ № 3

ԳԱՎԱՌՆԵՐ ՅԵՎ ԲԱՆԿՈՐՊՆԵՐ	Վաճառքը 1925—1926 թ. առաջին յեռամսյակ.	Վաճառքը 1926—1927 թ. առաջին յեռամսյակ.	Աճումը 0/0 0/0 ~-ով
1 Դիլիջանի	272.160	309.211	13,6
2 Լոռի-Փամբակի	500.619	657.723	31,4
3 Լենինականի	159.303	251.578	57,9
4 Եջմիածնի	380.170	503.756	32,5
5 Յերևանի	439.855	464.971	5,7
6 Նոր-Բայազետի	174.947	215.495	23,2
7 Դարալագյազի	76.334	101.455	32,9
8 Զանգեզուրի	145.804	229.545	57,4
9 Մեղրու	33.394	38.811	16,2
10 Յերևանի բանկոտայ	973.120	1.047.923	7,7
11 Լենինականի	385.029	437.326	13,6
Վոյվ ցանցը	3.540.735	4.257.794	20,2
2 Բանկոտայները	1.358.149	1.485.249	9,4
3 Գործարանային կոտայեր	168.206	195.509	16,1
7 Դավառակ. կենտ. ,,	628.093	662.641	5,5
66 Գյուղական	1.386.287	1.914.395	38,1

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՑԱՆՑԻ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ

Առ 1-ն հունվարի 1927 թ.:

Աղյուսակ № 4

ՀԱՇՎԵԿՇԻՐԻ ՀՈՐԴԱՅՆԵՐԸ	1925 թ. հոկտ. 1-ը		1927 թ. հունվ. 1-ը	
	Գումարը	0/0 0/0	Գումարը	0/0 0/0
ԱՆՇԱՐԺ ՄԻՋՈՑՆԵՐ				
Գույք	187.146	7,1	194.269	6,1
Փայեր	100.312	3,8	112.159	3,5
Ընդամենը	287.458	10,9	306.428	9,6
ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ				
Դրամ և ընթացիկ հաշիվ	184.858	7,2	260.470	8,2
Ապրանք ինքնարժեքով	1.559.595	59,5	1.837.913	57,6
Դերիտորներ	483.621	18,5	628.115	19,7
Չեզոքարկով յուճաններ	103.927	3,9	154.393	4,6
Ընդամենը	2.332.001	89,1	2.880.891	90,4
Հաշվեկշիռ	2.619.459	100	3.187.319	100,0
ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ				
Փոխադրամազուխ	235.266	9,0	284.859	8,9
Հիմնական դրամազու. ֆոնդ	404.060	15,4	609.351	19,1
Ոգուտ	291.362	11,1	157.953	5,0
Ընդամենը	930.688	35,5	1.052.163	33,0
Դուրս գալով անշարժ միջոց	287.458	10,9	306.428	9,6
Սեփ. միջոց. շրջանառ. մեջ	643.230	24,6	745.735	23,4
Փոխառու միջոցները	1.688.771	64,5	2.135.156	67,0
Հաշվեկշիռ	2.619.459	100	3.187.319	100,0

ԲԱՆԱԶԵՎ „ՀԱՅԿՈՈՊԻ“ ՀՐԱՀԱՆԳԻԶՆԵՐԻ Յ-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

«Հայկոպի» հրահանգիչների յերրորդ խորհրդակցությունը, լսելով ընկ. Պ. Ստամբուլյանի ղեկուցումը «հրահանգիչների դերը և նրանց աշխատանքի մեթոդները» նյութի մասին և ընկ. Ֆոլյանի ղեկուցումը՝ «տնտեսական հրահանգչությունը» նյութի մասին, հաստատում է, վոր.

1. Սպառողական կոոպերացիայի զարգացումով, Խորհրդային տնտեսության մեջ նրա տեսակարար կշռի ավելացումով և սպառողական կոոպերացիայի վերոհիշյալ հանգամանքներին բոլորով պատասխանատվության պատճառով—հրահանգչի դերը և նրա աշխատանքի բովանդակությունը համապատասխան լուրջ բնույթ և պատասխանատու նշանակություն են ստանում.

2. Հահանգչական աշխատանքի բովանդակությունը, Միություն տնտեսական զարգացման ընթացքի համաձայն, համապատասխան փոփոխություններ են կրել: Ռազմական կոմունիզմի շրջանում հրահանգիչը տանում էր կազմակերպչական-վարչական աշխատանք. մեր տնտեսության վերականգման շրջանում հրահանգիչը կոոպերացիայի ազդեցությունը և շինարար եր և միայն մասամբ տնտեսավար:

Նույն այդ շրջանը հետագայում բնորոշվում է կոոպերացիայում տնդի ունեցող զեղծումների և այլ թերությունների դեմ մղված պայքարով, վոր առաջ եր տարվում վերաստուգման միջոցով և վերաստուգիչ հետազոտություններով: Մեր ժողովրդական տնտեսությունը վերակառուցման շրջանը մտնելով, հրահանգչի անելիքները, համապատասխան կերպով, պետք է բարձրանան, դառնալով ավելի պատասխանատու և կոնկրետ:

3. Առաջիկա շրջանում հրահանգչական աշխատանքի բովանդակությունը պահանջում է արմատապես փոխել առորյա գործնական աշխատանքի մեթոդները: Կոոպերացիայի առաջ

դրված բարդ խնդիրների հանդեպ հրահանգիչ-վերաստուգիչը դառնում է հրահանգիչ-տնտեսավար, վորի պարտականությունն է՝ ղեկավարել կոոպերատիվ տնտեսավարությունը, նրա պլանացումը և կոոպերատիվի շրջանակներում ղեկավարել մեր ժողովրդական տնտեսությունը ընդհանուր ուղղության հետ:

4. Խորհրդակցությունը գտնում է, վոր մի շարք ոբյեկտիվ պայմաններ մեր կոոպերացիային հնարավորություն չեն տալիս կոոպերատիվ աշխատանքի զանազան ճյուղերում մասնագետ հրահանգիչներ պահելու: Ուստի, մեր հրահանգիչը, գոնե մասնակա շրջանում, իր աշխատանքի այս կամ այն ճյուղը իր մասնագետությունը դարձնելով հանդերձ, պետք է միևնույն ժամանակ հանրագետ լինի, այսինքն տեղյակ լինի կոոպերատիվ աշխատանքի բոլոր ճյուղերին:

5. Ներկայումս հրահանգչական աշխատանքի կոնկրետ բովանդակությունը պահանջում է, վոր հրահանգիչը հանրագետ լինի իր աշխատանքի մեջ և աշխատի իր աշխատանքին տնտեսավարական բնույթ տալ, այսինքն՝ ձգտի իր ինքնակատարելագործմանը առավելագույն տնտեսավարական բովանդակություն տալ:

6. Խորհրդակցությունը գտնում է, վոր հրահանգիչը սպառողական տեխնիկական ապարատի տեղը չպիտի բռնի: Նրա խնդիրն է միայն, ապարատը դաստիարակել և ղեկավարել, կոոպերատիվների աշխատանքները ղեկավարել, պլանացնել, ցանցի առանձին կոոպերատիվների թերությունները վերացնել կոնկրետ միջոցներով, խույս տալ համապարփակ և ընդհանուր բնույթ կրող վերաստուգիչ հետազոտություններին, կենտրոնացնել աշխատանքը ամենակարևոր, կոնկրետ և հրատապ խնդիրների վրա. այսինքն՝ հրահանգչական աշխատանքին պետք է գործարար բովանդակություն տալ:

7. Կոոպերատիվների վերաստուգման և վերաստուգիչ հետազոտման իրավունքը վերապահելով Միությանը և նրա հրահանգչական ապարատին, հրահանգիչը պետք է ձգտի, վորպեսզի վերաստուգման և վերաստուգիչ հետազոտման տեխնիքական ամբողջ աշխատանքը կատարվի այդ կոոպերատիվների վերաստուգիչ մարմինների ուժերով: Հրահանգիչները պետք է միայն ղեկավարեն և ուսուցանեն վերաստուգիչ մարմիններին և պլանացման յենթարկեն նրանց աշխատանքը:

8. Խորհրդակցությունը նպատակահարմար է համարում, վոր

յուրաքանչյուր հրահանգիչ ավելի կամ պակաս ժամանակով կապված լինի կամ կոոպերատիվների մի խմբի հետ կամ մի վորոշ շրջանի հետ: Աշխատանքը միայն այդ ձևով է բաշխվում, և, վոր ստեղծում է աշխատանքի հաջորդականությունը և պատասխանատվության պայմաններ: Այդ անմիջապես իրադրոճիլը անհետաձգելի խնդիր է:

9. Խորհրդակցությունը գտնում է; վոր հրահանգչի իրավունքների և նրա հեղինակության հարցերը անխզելի կերպով կապված են նրա պատասխանատվության չափի և գործունեությունից շրջանում հայտարարած նախաձեռնությունից հետո: Իր առաջ գրված հարցերի ճիշտ ըմբռնումը և նրանց վերաբերմամբ ժամանակին համապատասխան միջոցներ ձեռք առնելը ապահովում են հրահանգչի հեղինակությունը և նրա «իրավունքները»:

10. Անհրաժեշտ է, վոր հրահանգիչը բազմակողմանի կերպով լիմանա, թե ստորին ցանցի և թե Միություն կազմակերպչական ու առևտրական-ֆինանսական աշխատանքները: Այդ հանգամանքը պարտադրում է Միությանը և հրահանգիչներին, վոր նրանք շատ լուրջ ուշադրություն դարձնեն փոխադարձ ինֆորմացիան ամուր հիմքերի վրա դնելու խնդրին: Այդ նպատակով հրահանգիչները պարտավոր են ուսումնասիրել Միության տրեստական աշխատանքը, տեղյակ լինեն նրա ապրանքային ասորտորտմանին, գներին, ֆինանսական և ապրանքային վարկավորման և այլն:

11. Վորովհետև հրահանգիչը պատասխանատու է կոոպերատիվների վորոշ խմբի կամ վորոշ շրջանի աշխատանքների հաջողությունից համար, նա պարտավոր է ազատ ժամանակները ի մի գումարել իր կատարած աշխատանքը, ուսումնասիրել առանձին կոոպերատիվների և մի շրջանի կոոպերատիվների խմբի աշխատանքը՝ նրա դինամիկայի և աճման տեսակետից, ընդհանրացումներ անել, ի մի գումարել և Միությանը տեղեկություններ տալ, թե առանձին կոոպերատիվ միավորների և թե իր ամբողջ շրջանի կոոպերատիվների մասին: Այդ աշխատանքի մեջ նա պետք է շոշափի վոճ միայն զուտ կոոպերատիվ շինարարության հարցերը, այլ և իր շրջանի եկոնոմիկայի հարցերը:

12. Կենտրոնը միայն այն դեպքում կարող է կանոնավոր կերպով դեկավարել և ուղղություն տալ հրահանգչական աշխատանքին, ավելի խորացնել հրահանգիչների գիտելիքները և

պրակտիկան, յերբ հրահանգչի ամբողջ աշխատանքը խիստ հաշվառման յենթարկվի և հրահանգչական աշխատանքի նյութերը կազմակերպչական կոոլեգիայի կողմից խորն ուսումնասիրությունից յենթարկվեն:

13. Առաջիկա հրահանգչական աշխատանքի տնտեսավարական թեքումը կարելի է կենսագործել հետևյալ կենկրետ ձևերով: ա) ուսումնասիրել ապրանքները դանադան տեղերից գնելու շահավետությունից հարցերը. բ) ուսումնասիրել Հայկոպի կալկուլատիվ պրակտիկան, նրա հիմունքները և ամբողջ ցանցի համար միորինակ կալկուլացիա սահմանել. գ) ուսումնասիրել մեր առաջին աստիճանի կոոպերատիվների, բաղաների և ներկայացուցիչների փոխադարձ հարաբերությունները, նպատակ դնելով վորոշել նրանց աշխատանքի ոգտակարությունը ցանցի համար. դ) ուսումնասիրել այն պատճառները, վորոնք գրգռում են մեր առաջին աստիճանի կոոպերատիվներին իրենց ապրանքները մասնավորներից գնելու պարզիլով մասնավորների ասորտորտմանը և նրանց ապրանքների գները. ե) ուսումնասիրել այն ասորտորտմանը, վոր չի վաճառվում Հայկոպում. ուսումնասիրել թե վորքան մեծ է Հայկոպում չվաճառվող այդ ապրանքների պահանջը. զ) ուսումնասիրել ցանցում ապրանքների կուտակման պատճառները, այդ կուտակումների չափը և նրանց վերացնելու յեղանակները. յ) ուսումնասիրել, թե վորքան հնարավոր է առաջին անհրաժեշտության գյուղատնտեսական ապրանքները միջերկ ստորին ցանցի միջոցով. լ) ուսումնասիրել պետառևտրի, գյուղատնտեսական կոոպերացիայի և սպոկոպի փոխադարձ հարաբերությունները. թ) շարունակել գների իջեցման պայքարը՝ ապարատը ռացիոնալիզացիայի յենթարկելով, յուրաքանչյուր կոոպերատիվի համար՝ կենտրոնի դիրեկտիվների համաձայն, հավելումների և ծախսերի մեծագույն հավելումներ սահմանելով, յուրաքանչյուր տեսակի ծախսերը կրճատելով, մանրամասնորեն ուսումնասիրելով և հայտարարելով հիշյալ ծախսերի այն պատճառները, վորոնք կախված չեն կոոպերատիվից և արգիլք են հանդիսանում գների իջեցմանը:

14. Վերահիշյալ բարդ և բազմապիսի խնդիրները իրադրոճելու համար և նկատի ունենալով մեր տնտեսության դարգացման արագ աճումն ու տեմպը, ի նկատի ունենալով, վոր կարող է հրահանգիչը համապատասխան պատրաստությունը չունենալ համակերպվելու այդ տեմպին և նրա առաջադրած հարցերին, սուր


ընդլծ են ընդունում հրահանգիչներին պատրաստելու և վերապատրաստելու հարցերը:

15. Պատրաստման և վերապատրաստման գործի համար անհրաժեշտ են հետևյալ ձեռնարկումները. ա) հրահանգիչների խորհրդակցություններ կազմակերպել տարեկան չորս անգամից վոչ պակաս. բ) յուրաքանչյուր գավառում որինակելի կոոպերատիվ հիմնել, այդ շրջանի հրահանգչի անմիջական ղեկավարությամբ և պատասխանատվությամբ. գ) հրահանգիչները պետք և ուսումնասիրեն իրենց մասնագիտությունը վերաբերյալ հարցերը, որինակ՝ ապրանքագիտություն, պահեստի և խանութի գործի տեխնիկա, գործակատարների աշխատանքի տեխնիկա և այլն. դ) հրահանգիչներին ամրացնել Միություն և առանձին կոոպերատիվների գործնական տնտեսական աշխատանքին. ե) հրահանգիչներին գործող լինել կենտրոնի և Անդրկովկասի կոոպերատիվ հիմնարկները՝ այլ կոոպերատիվ կազմակերպությունների պրակտիկական ուսումնասիրելու նպատակով. զ) պատրաստման և վերապատրաստման նպատակով համար, առանձին հրահանգիչներին հատուկ աշխատանքներ հանձնարարել, հրահանգիչների խորհրդակցությունների ժամանակ և հատուկ հանձնաժողովներում այդ աշխատանքներին վերաբերյալ ղեկուցումներ լսել. ե) պատրաստմանը նպաստել հրահանգիչներին համապատասխան զրահանություն և ձեռնարկներ մատակարարելով:

16. Հրահանգիչների հասարակական աշխատանքը և նրանց ինքնակատարելագործման պարապմունքները լիովին հաշվառման յենթարկելու համար անհրաժեշտ համարել և պարտադրել, Վոր հրահանգիչները իրենց աշխատանքների որագիրը ունենան:

Վ Ր Ի Պ Ա Կ

Տ ա ղ ա ծ ե 5-րդ յերեսի 3-րդ տողում 1925 թվականից
Պիսի լիմի » » » » 1923 թվականից



ԳԻՆՆՆ Ե 70 ԿՈՊ.

807

1
9